

«Հայաստանը Սահմանադրությունից կիսան տարածքային պահանջները: Խաղաղության համաձայնագիր ստորագրելիս բոլոր հարցերը պետք է լուծվեն, և մեր նկատմամբ անհիմն տարածքային պահանջները պետք է բացառվեն», – ասել է Ադրբեջանի նախագահը: Նրան հաջորդել է Ադրբեջանի ԱԳ Նախարարի հիշեցումը՝ «Ադրբեջանը սպասում է Հայաստանում սահմանադրական փոփոխություններին՝ խաղաղության համաձայնագիրը ստորագրելու համար»:

Զորքաբթի
3 սեպտեմբերի 2025թ.
№ 15 (645)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԵՅՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻԼԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

I SSN 1829- 3468
2 5 0 1 5 >
9 771829 346006

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Սյունիքում մերժում են Արցախի ուրացման քաղաքականությունը

Սեպտեմբերի 2-ն Արցախի Անկախության օրն է: 34 տարի առաջ՝ սեպտեմբերի 2-ին, Արցախը հռչակեց իր անկախությունը Խորհրդային Միությունից:

1991 թվականի սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի էր ունեցել պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհրդի համատեղ նստաշրջան, ուր ընդունվել էր «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»: Նույն թվականի դեկտեմբերի 10-ին տեղի էր ունեցել հանրաքվե, որը հաստատել էր Լեռնային Ղարաբաղի անկախությունը: ԼՂԻՄ բնակչության 80%-ը մասնակցեց հանրաքվեին, որոնց 99%-ից ավելին քվեարկեց անկախության օգտին: //



Ալի Աբբար Վելայաթի. «Իրանը թույլ չի տա ամերիկյան միջանցքի ստեղծումը Կովկասում՝ անկախ Մոսկվայի դիրքորոշումից»

«Հանգեզուրի միջանցք» նախագծով ԱՄՆ-ն ու Իսրայելը նպատակ ունեն վնաս հասցնել Իրանի ազգային անվտանգությանը», – հայտարարել է Իրանի հոգևոր առաջնորդ ալայթուա Խամենեյի

միջազգային հարցերով գլխավոր խորհրդական Ալի Աբբար Վելայաթին:

Իրանցի բարձրաստիճան պաշտոնյայի համոզմամբ՝ «Հանգեզուրի միջանցք» անվան տակ իրականում թաքնված է լայն աշ-

խարհաքաղաքական ծրագիր. «Իրական նպատակն է թուլացնել «դիմադրության առանցքը», խզել Իրանի կապը Կովկասի հետ և հարավում Իրանի ու Ռուսաստանի դեմ իրականացնել ցամաքային բլոկադա»:

Իրանի հոգևոր առաջնորդի գլխավոր խորհրդականը, ով շուրջ 16 տարի զբաղեցրել է արտաքին գործերի նախարարի պաշտոնը, համոզված է՝ այսպես կոչված «Հանգեզուրի միջանցք» նախագծին աջակցում են ոչ միայն ԱՄՆ-ն ու ԱՄՆ-ը, նպատակ ունենալով Ուկրաինայից ճնշումը տեղափոխել Կովկաս, այլև «այդ նախագծին աջակցում են նաև որոշ պակսթուրքիստական շարժումներ»:

Պաշտոնական Թեհրանը թերևս առաջին անգամ է այսպես կոչված «Հանգեզուրի միջանցքի» շահառու դիտարկում նաև պակսթուրքիստական շարժումներին: 19-րդ դարի վերջին ստեղծված պակսթուրքիզմի գաղափարախոսության նպատակն է «Մեծ Թուրանի» ստեղծումը՝ թուրք ժողովուրդների համախմբումը մեկ միասնական թուրքական պետության մեջ:

Խոսելով Ադրբեջանի և Թուրքիայի առաջ քաշած «Հանգեզուրի միջանցք» նախագծի աշխարհաքաղաքական նպատակների մասին, Իրանի հոգևոր առաջնորդի միջազգային հարցերով խորհրդական Վելայաթին ընդգծում է՝ Թեհրանը ի սկզբանե հստակ ու վճռական կերպով ընդդիմացել է այս քայլերին և Նույնիսկ «սահմանին ուժեր է տեղակայել և իրականացնում է կանխարգելիչ

Շարունակությունը՝ էջ 3

Եվ չգիտեին, որ ես չեմ մեռել, որ ես չեմ մեռնի, որ եղել եմ, կամ՝
Նորից կբնեմ, նորից կարթնանամ, –
Ես հազարանուն՝ Մահ, Ավերք ու Նեռ...

ԵՂԻՇԵ ՀԱՐԵՆՑ

Հյուսիսից և արևելքից արդեն իսկ օկուպացված Սյունիքը շրջափակվում է նաև հարավից. ո՞ր մնաց ինքնիշխանության մասին մեր չդադարող բարբաջը

Օգոստոսի 8-ին Վաշինգտոնում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը ստորագրել են մի շարք փաստաթղթեր:

- Մասնավորապես՝ Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև. «Խաղաղության խաչմերուկ» նախագծի կարողությունների գարգացման ոլորտում գործընկերության մասին,
 - Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև. արհեստական բանականության և կիսահաղորդիչների ոլորտում նորարարական գործընկերության մասին,
 - Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև. Էներգետիկ անվտանգության ոլորտում գործընկերության մասին:
- Բացի այդ, Ադրբեջանի և Հայաստանի ԱԳ Նախարարները ստորագրել են դիմում ԵԱՀԿ-ին՝ Արցախի խնդրի կարգավորման հարցով ստեղծված Մինսկի խումբը լուծարելու վերաբերյալ:

Երկու Նախարարները Նախաստորագրել են (չեն ստորագրել) Համաձայնագիրը՝ ՀՀ-ի և Ադրբեջանի միջև խաղաղության ու միջպետական հարաբերությունների հաստատման մասին:

Եվ ամենակարևորը՝ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարների կողմից (ԱՄՆ նախագահի վկայությամբ) ստորագրվել է Հռչակագիր Ադրբեջանի արևմտյան շրջանները Նախիջևանի հետ կապող միջանցքի մասին:

Առաջմ չենք շտապում վերջնական դատողություններ անել, քանի դեռ Հռչակագրին առնչվող բազմաթիվ հարցերի պատասխանները դեռևս չեն տրվել:

Եվ, այդ բոլորով հանդերձ, մի շարք իրողություններ արդեն իսկ կարելի է արձանագրել:

Եվ ուրեմն՝ իրականություն է դառնում Ադրբեջանի և Թուրքիայի՝ ավելի քան հարյուր տարվա երազանքը՝ ստեղծվում է «Հանգեզուրի միջանցքը»: Ճիշտ է՝ միջանցքին տրվում է այլ անուն՝ «Թրամփի ուղի» հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման, բայց դրանից միջանցքային տրամաբանությունը և բովանդակությունը չեն փոխվում:

Հիշենք, դա այն միջանցքն է, որի ստեղծմանը դեմ են եղել Հայաստանի վերջին հարյուր տարվա բոլոր ղեկավարները՝ սկսած Առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանից:

Արձանագրենք՝ Հռչակագիրը եռակողմ փաստաթուղթ չէ, ինչպես փորձում են ներկայացնել: Հռչակագիրը Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների միջև կնքված երկկողմ փաստաթուղթ է, իսկ ԱՄՆ նախագահը ոչ

Շարունակությունը՝ էջ 4



Ադրբեջանի Հանրապետության Նախագահի, ՀՀ վարչապետի և ԱՄՆ Նախագահ Դոնալդ Թրամփի համատեղ Հռչակագիրը

Սպիտակ տանը կայացած Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ամերիկայի Միացյալ Նահանգների Նախագահ Դոնալդ Թրամփի և Ադրբեջանի Հանրապետության Նախագահ Իլհամ Ալիևի եռակողմ հանդիպմանը ստորագրվել է Ադրբեջանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Ամերիկայի Միացյալ Նահանգների Նախագահի համատեղ Հռչակագիրը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների մայրաքաղաք Վաշինգտոնում տեղի ունեցած հանդիպման արդյունքների մասին:

«Մենք՝ Ադրբեջանի Հանրապետության Նախագահը և Հայաստանի Հանրապետության վարչապետը, 2025 թվականի օգոստոսի 8-ին հանդիպելով Ամերիկայի Միացյալ Նահանգների մայրաքաղաք Վաշինգտոնում, հռչակում ենք հետևյալը.

1. Մենք և Ամերիկայի Միացյալ Նահանգների Նախագահ Դոնալդ Զ. Թրամփը ականատես եղանք Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև խաղաղության ու միջպետական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագրի համաձայնեցված տեքստի Նախաստորագրմանը Կողմերի արտաքին գործերի Նախարարների կողմից: Ըստ այդմ, մենք ընդունեցինք Համաձայնագրի ստորագրմանը և վերջնական վավերացմանը հասնելու ուղղությամբ հետագա գործողությունները շարունակելու անհրաժեշտությունը և ընդգծեցինք մեր երկու երկրների միջև խաղաղության պահպանման ու ամրապնդման կարևորությունը:

2. Մենք ականատես եղանք Նախաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի Նախարարների կողմից Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) ուղղված՝ ԵԱՀԿ Մինսկի գործընթացի և կից կառուցակարգերի լուծարման վերաբերյալ համատեղ դիմումի ստորագրմանը: Մենք կոչ ենք անում ԵԱՀԿ բոլոր մասնակից պետություններին՝ ընդունել այս որոշումը:

3. Մենք վերահաստատեցինք ներպետական, երկկողմ և միջազգային փոխադրումների համար երկու երկրների միջև հաղորդակցությունների բացման կարևորությունը՝ հիմնված պետությունների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և իրավագործության հարգման վրա, տարածաշրջանում ու նրա հարևանությամբ խաղաղությունը, կայունությունն ու բարգավաճումը խթանելու նպատակով: Այս ջանքերը կներառեն Ադրբեջանի Հանրապետության հիմնական մասի և Նախիջևանի հիմնավոր Հանրապետության միջև Հայաստանի Հանրապետության տարածքով անխոչընդոտ հաղորդակցությունը՝ Հայաստանի Հանրապետության համար միջազ-

գային ու ներպետական հաղորդակցության փոխադարձ առավելություններով:

4. Հայաստանի Հանրապետությունն աշխատելու է Ամերիկայի Միացյալ Նահանգների և փոխադարձաբար համաձայնեցված երրորդ կողմերի հետ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում «Թրամփի ուղի» հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» («Trump Route for International Peace and Prosperity» (TRIPP)) հաղորդակցության ծրագրի իրականացման շրջանակը սահմանելու նպատակով: Մենք հաստատում ենք մեր վճռականությունը բարեխղճորեն ձեռնարկելու բոլոր միջոցները՝ սույն նպատակին հնարավորինս արագ կերպով հասնելու համար:

5. Մենք ընդունում ենք անցյալի հակամարտությամբ չկանխորոշված, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանն ու 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրին համապատասխան պայծառ ապագայի ուղի Նախանշելու անհրաժեշտությունը: Մարդկային անասելի տառապանքներ պատճառած հակամարտությունից հետո մեր ժողովուրդների համար ստեղծվել են վերջապես բարիդրացիական հարաբերություններ սկսելու պայմաններ՝ հիմնված միջազգային սահմանների անբախտելիության և տարածքներ ձեռք բերելու նպատակով ուժի կիրառման անթույլատրելիության սկզբունքների վրա: Այս իրողությունը, որը ենթակա չէ և երբեք չպետք է ենթակա լինի վերանայման, ճանապարհ է հարթում մեր երկու ժողովուրդների միջև թշնամանքի էջը փակելու համար: Մենք վճռականորեն մերժում և բացառում ենք վերադարձի ցանկացած փորձ ներկայում և ապագայում:

6. Մենք արտահայտում ենք մեր համոզմունքը, որ այս գաղաթնաժողովը ամուր հիմք է փոխադարձ հարգանքի և տարածաշրջանում խաղաղության առաջնության համար:

7. Մենք խորին շնորհակալություն ենք հայտնում Ամերիկայի Միացյալ Նահանգների Նախագահ Դոնալդ Զ. Թրամփին՝ այս կարևոր գաղաթնաժողովի հյուրընկալման և ցուցաբերած ջերմ ընդունելության, ինչպես նաև Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների կարգավորման գործընթացում իր նշանակալի ներդրման համար:

Սույն Հռչակագիրը ստորագրվել է 2025 թվականի օգոստոսի 8-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների մայրաքաղաք Վաշինգտոնում:

ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎ

Ադրբեջանի Հանրապետության Նախագահ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետ

ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓ

Ամերիկայի Միացյալ Նահանգների

Նախագահ

Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին Նախաստորագրված համաձայնագիրը

- Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը (այսուհետ՝ Կողմեր),
- գիտակցելով տարածաշրջանում արդար, համապարփակ և տևական խաղաղության հաստատման հրատապ անհրաժեշտությունը,
- ձգտելով նպաստել այդ նպատակի իրականացմանը միջպետական հարաբերությունների հաստատման միջոցով,
- առաջնորդվելով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ, «Միավորված ազգերի կանոնադրությանը համապատասխան պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագրով (1970թ.), Եվրոպայում անվտանգության և համագործակցության Յեյսինկյան կոնֆերանսի եզրափակիչ ակտով (1975թ.)
- և 1991 թվականի դեկտեմբերի 21-ի Ալմաթիի հռչակագրով և նպատակ ունենալով զարգացնել հարաբերությունները նշված փաստաթղթերում ամրագրված նորմերի և սկզբունքների հիման վրա,
- արտահայտելով իրենց միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատելու փոխադարձ կամքը,
- համաձայնել են խաղաղություն և միջպետական հարաբերություններ հաստատել միմյանց միջև հետևյալի հիման վրա.

ՀՈՐԿԱՍԻ

Հաստատելով, որ Նախկին ԽՍՀՄ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների միջև սահմանները դարձել են համապատասխան անկախ պետությունների միջազգային սահմանները և որպես այդպիսին ճանաչվել են միջազգային հանրության կողմից՝ Կողմերը ճանաչում են և կհարգեն միմյանց ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, միջազգային սահմանների անձեռնմխելիությունը և բաղաժանան անկախությունը:

ՀՈՐԿԱՍԻ II

Ամբողջությամբ համապատասխանելով հողված I-ին՝ Կողմերը հաստատում են, որ միմյանց նկատմամբ չունեն տարածքային պահանջներ և հետագայում նման պահանջներ չեն առաջադրի:

Կողմերը չեն ձեռնարկի որևէ գործողություն, այդ թվում՝ այդպիսի գործողությունների պլանավորումը, Նախապատրաստումը, խրախուսումը և աջակցումը, որը նպատակ ունի ամբողջությամբ կամ մասամբ տրոհել կամ խաթարել մյուս Կողմի տարածքային ամբողջականությունը կամ բաղաժանան միասնությունը:

ՀՈՐԿԱՍԻ III

Կողմերը միմյանց հետ փոխադարձ հարաբերություններում ձեռնպահ կմնան տարածքային ամբողջականության կամ բաղաժանան անկախության դեմ կամ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության հետ անհամատեղելի որևէ այլ ձևով ուժի կիրառումից կամ ուժի կիրառման սպառնալիքից: Նրանք որևէ երրորդ կողմի թույլ չեն տա օգտագործել իրենց համապատասխան տարածքները մյուս Կողմի դեմ ՄԱԿ-ի կանոնադրությանը չհամապատասխանող ուժի կիրառման համար:

ՀՈՐԿԱՍԻ IV

Կողմերը ձեռնպահ կմնան միմյանց ներքին գործերին միջամտելուց:

ՀՈՐԿԱՍԻ V

Երկու Կողմերի կողմից սույն Համաձայնագրի վավերացման ներպետական ընթացակարգերն անցած լինելու մասին ծանուցումների փոխանակումից հետո _ օրվա ընթացքում Կողմերը դիվանագիտական հարաբերություններ կհաստատեն միմյանց հետ՝ Դիվանագիտական և Յուրապատասխան հարաբերությունների մասին Վիեննայի (համապատասխանաբար 1961թ. և 1963թ.) կոնվենցիաների դրույթներին համապատասխան:

ՀՈՐԿԱՍԻ VI

Ամբողջությամբ համապատասխանելով սույն Համաձայնագրի հողված I-ով Նախատեսված իրենց պարտավորություններին՝ Կողմերը բարեխղճորեն բանակցություններ կվարեն համապատասխան սահմանային հարցերով հանձնաժողովների միջև՝ համաձայն Հանձնաժողովների համաձայնեցրած կանոնակարգերի՝ Կողմերի միջև



պետական սահմանի սահմանազատման և սահմանագծման մասին համաձայնագիրը կնքելու նպատակով:

ՀՈՐԿԱՍԻ VII

Կողմերը որևէ երրորդ կողմի ուժեր իրենց համատեղ սահմանի երկայնքով չեն տեղակայի: Կողմերը, միևնույն ժամանակ սահմանազատումը և դրան հաջորդող սահմանագծումը, կիրականացնեն անվտանգության և վստահության ամրապնդման փոխհամաձայնեցված միջոցներ, այդ թվում՝ ռազմական ուղորդում՝ սահմանամերձ շրջաններում անվտանգությունն ու կայունությունն ապահովելու նպատակով:

ՀՈՐԿԱՍԻ VIII

Կողմերը դատապարտում են և կպայքարեն անհանդուրժողականության, ռասայական ատելության և խտրականության, անջատողականության, բռնի ծայրահեղականության և ահաբեկչության դեմ՝ դրանց բոլոր դրսևորումներով՝ յուրաքանչյուրն իր իրավագործության շրջանակներում և կապահովեն իրենց նկատմամբ կիրառելի միջազգային պարտավորությունների կատարումը:

ՀՈՐԿԱՍԻ IX

Կողմերը պարտավորվում են հասցեագրել երկու Կողմերի ներգրավմամբ զինված հակամարտությունում անհայտ կորած անձանց և բռնի անհետացումների դեպքերը, այդ թվում՝ ուղղակիորեն կամ հարկ եղած դեպքում համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ այդ անձանց վերաբերյալ առկա բոլոր տեղեկությունների փոխանակման միջոցով: Սույնով Կողմերը ճանաչում են այդ անձանց ճակատագրերի բացահայտման, այդ թվում՝ մասունքների որոնման և ըստ պատշաճի վերադարձման, պատշաճ քննության միջոցով այդ անձանց առնչությամբ արդարության ապահովման կարևորությունը՝ որպես հաշտեցման և վստահության ամրապնդման միջոց: Այս առնչությամբ համապատասխան կարգավորումները կբանակցվեն և մանրամասն կհամաձայնեցվեն առանձին համաձայնագրով:

ՀՈՐԿԱՍԻ X

Կողմերը կարող են տարբեր

907-րդ բանաձևի ամբողջական չեղարկման իրավասությունը պատկանում է բացառապես ԱՄՆ Կոնգրեսին, ոչ թե՛ Նախագահին

Ադրբեջանի Նախագահ Իլիամ Ալիևի վերջին հայտարարությունները՝ 907-րդ բանաձևի չեղարկման շուրջ, զուտ քարոզչական են, քանի որ բանաձևը դեռևս չեղարկված չէ։ Sputnik Արմենիայի հետ զրույցում այս մասին ասաց ԶՅԴ Ֆայ դատի Կենտրոնական գրասենյակի հատուկ ծրագրերի պատասխանատու Գևորգ Ղուկասյանը։

Ինչի՞ մասին է 907-րդ բանաձևը։

1992 թվականին, հաշվի առնելով Ար-ցախի դեմ հրահրված պատերազմը, հայ հա-մայնքի և լոբբիստների աշխատանքի շնոր-հիվ «Ազատության աջակցության ակտի» տեքստում ներառվեց «907-րդ բանաձև» հոդվածը, որով արգելվեց ԱՄՆ կառավա-րությանը որևէ աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին, քանի դեռ ԱՄՆ Նախագահը չի համոզվել և չի գեկուցել Կոնգրեսին, որ պաշ-տոնական Բաբուն գործուն քայլեր է ձեռ-նարկում Ֆայաստանի ապաշրջափական և Ֆայաստանի ու Էռևնային Ղարաբաղի դեմ ուժ չկիրառելու ուղղությամբ։

Ինչպես հայտնել ենք, օգոստոսի 8–ին Վաշինգտոնում 7 կետից բաղկացած հռչակա-գրի ստորագրման արարողության ժամանակ ԱՄՆ Նախագահ Դոնալդ Թրամփը հայտա-րարեց Վաշինգտոնի և Բաքվի միջև պաշտ-պանական ոլորտում համագործակցության սահմանափակումների վերացման մասին։

Գևորգ Ղուկասյանը չի բացառում, որ 907-րդ բանաձևը կարող է չեղարկվել, սակայն հիշեցնում է, որ ամբողջական չեղարկման իրավասությունը պատկանում է բացառապես

Խաղաղություն խոստացող Իլիամի սպառնալիքները

«Մենք վրեժ լուծեցինք թշնամուց մարտադաշտում։ Մենք կրկին ցույց տվե-ցինք մեր ժողովրդի մեծությունը»,–ասել է Ադրբեջանի Նախագահ Իիլամ Ալիևը Ադրբեջանից կողմից բռնագրաված, հայա-թափած Զարվաճառում։

«Ես սա ասում եմ և՛ որպես պատերազ-մում հաղթած երկրի գերագույն գլխավոր հրամանատար, և՛ որպես այսօրվա խաղաղության գործընթացի մասնակից՝ Ֆայաստանի՝ պարտված Ֆայաստանի հետ։ Մենք պատերազմ չենք ուզում։ Մենք խաղաղություն ենք ուզում։ Սակայն այս արյունալի պատմությունը երբեք չպետք է ջնջվի մեր հիշողությունից, մենք չպետք է առաջնորդվենք քաղոք խոսքերով, մենք պետք է զգոն լինենք։

Իհարկե, մեր զինված ուժերը ամեն

ԱՄՆ Կոնգրեսին, ոչ թե Նախագահին։

«Դեռևս 2001 թվականից սկսած՝ սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո, ԱՄՆ Նախագահը ստացել է իրավասություն՝ հատուկ հրամանագրով մեկ տարով կասեցնել 907-րդ բանաձևի կիրառումը։ Սա առավելագույնը կարող է իրականացվել մեկ տարով, բայց հնարավոր է անընդհատ երկարացնել։ Սկսած 2002-ից մինչև 2023 թվականը բոլոր Նախագահները ստորագրել են այսպես կոչված խուսանավման հրամանագիրը, ինչի արդյունքում Ադրբեջանը ստացել է ամերիկյան օժանդակություն, այդ թվում՝ ռազմական», – ասաց Նա։

Գևորգ Ղուկասյանի խոսքով՝ ԱՄՆ պաշտոնյաները երբեմն հայկական համայնքի հետ զրույցում նշել են, որ օժանդակության ծավալները չափազանցված են։ Սակայն խնդիրը, ըստ Նրա, ոչ թե դրա չափն է, այլ փաստը, որ Նման քայլը քաղաքական «կանաչ լույս» է տալիս Ադրբեջանի գոր-ծողություններին։

«Եթե Ադրբեջանը ստանում է ամերիկյան աջակցություն, նշանակում է, որ ԱՄՆ–ն աչք է փակում Նրա պատե-րազմական հանցագործությունների վրա և փաստացի ուղերձ է հղում, թե խնդիր չի տեսնում այդ գործողություններում։ Ֆայ դատի Ամերիկայի հանձնախումբն այս ամենը գիտակցելով է, որ տարիներ շարունակ պայքարել է 907-րդ բանաձևի գործադրումն ապահովելու համար»,– նշեց Ղուկասյանը՝ ընդգծելով, որ 2023-ից ի

րոպե, ամեն օր պահպանում են մեր պետության շահերն ու անվտանգությունը։ Մենք դիտարկում ենք, տեսնում ենք և կտեսնենք սպառնալիքների հնարավոր աղբյուրները։ Մենք մեծացնում ենք մեր ռազմական հզորությունը։

Երկրորդ Ղարաբաղյան պատերազմից հետո, մեր ուժերի զարգացման հետ կապված՝ ինչպես Կասպից ծովում, այնպես էլ մյուս բոլոր զինված ուժերում, մենք մեր հատուկ նշանակության ուժերի թիվը ավելացրինք հազարավոր կործանիչներով՝ չեմ ուզում ճշգրիտ թիվ նշել, բայց շատ, ստեղծվեցին Նոր կոմանդոսային ուժեր։ Մեր երկիր են մատակարարվել ամենաժամանակակից անօդաչու թռչող սարքեր, Նոր հրետանային համակարգեր։ Պայմանագրեր են կնքվել Նոր մար-

վեր որոշակի հաջողություններ գրանցվել են։

«ԱՄՆ վերջին Նախագահները՝ Ջո Բայդենը և կառավարման առաջին ամիս-ների ընթացքում՝ Թրամփը, որի «խուս-սանավման» հաջորդ հրամանագիրը Նախատեսվում էր ապրիլին, չստորա-գրեցին 907-րդ բանաձևը։ Բայց վեր-ջին պայմանավորվածությունների արդյունքում, ըստ Թրամփի և Ալիևի հայտարարությունների, կարող ենք եզրակացնել, որ ԱՄՆ Նախագահը կստո-րագրի հատուկ հրամանագիր, որով կդադարեցվի 907-րդ բանաձևի գործա-դրումը։ Սա կարող է լինել մեկ տարով, բայց մեկ տարի հետո, բնականաբար, էլի կարող է կրկնվել», – մանրամասնեց Ղուկասյանը։

Ղուկասյանը կարևորեց երկու ուղղությամբ աշխատանքների շարունակությունը՝ կանխել Կոնգրեսի կողմից բանաձևի ամբողջական չեղարկումը և ապահովել դրա գործադրումը ապագայում։

«Ամենայն հավանականությամբ՝ Ադրբեջանը չի պահելու ստանձնած պարտավորությունները։ Ալիևի խոր-հրդականի հայտարարությունները, թե խաղաղության պայմանագիր չի ստո-րագրվելու մինչև Ֆայաստանի Սահմա-նադրության փոփոխությունները, ցույց են տալիս, որ Նույնիսկ ԶՅ–ի կողմից հերթական ու Էական գիշումներից հետո Ադրբեջանը կարող է կրկին ապակա-ռուցողական վարք դրսևորել», – ընդգծեց Նա։

Լուղղություններով, այդ թվում՝ տնտեսական, տարանցիկ փոխադրման ու տրանսպորտային, բնա-պահպանական, հումանիտար և մշակու-թային, համագործակցություն հաստատելու Նպատակով կնքել համաձայնագրեր փո-խադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում։

ՅՈՐԴԱՍԵ XI

Սույն Ցամաձայնագիրը չի սահմա-նափակում միջազգային իրավունքով և ՄԱԿ-ի մյուս անդամ պետությունների հետ Կողմերից յուրաքանչյուրի կողմից կնքված պայմանագրերով Կողմերի ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները։ Յուրաքանչյուր Կողմ կապահովի, որ իր և որևէ երրորդ կողմի միջև այժմ գործող միջազգային համաձայնություններից ոչ մեկը չի խաթարի սույն Ցամաձայնագրով ստանձնած իր պարտավորությունների կատարումը։

ՅՈՐԴԱՍԵ XII

Կողմերն իրենց երկկողմ հարաբե-րություններում կառաջնորդվեն միջազգային իրավունքով և սույն Ցամաձայնագրով։ Կողմերից ոչ մեկը չի կարող վկայակոչել իր ներպետական օրենսդրության դրույթները՝ որպես սույն Ցամաձայնագրի չկատարման հիմնավորում։

Կողմերը, Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի (1969թ.) կոնվենցիային համապատասխան, ձեռնպահ կմնան այնպիսի գործողություններից, որոնք կխախտեն սույն Ցամաձայնագրի խնդիրն ու

Նպատակը մինչև դրա ուժի մեջ մտնելը։

ՅՈՐԴԱՍԵ XIII

Կողմերը երաշխավորում են սույն Ցամաձայնագրի ամբողջական կատարումը և կստեղծեն երկկողմ Ցանձնաժողով՝ սույն Ցամաձայնագրի կատարումը վերահսկելու Նպատակով։ Ցանձնաժողովը կաշխատի Կողմերի կողմից համաձայնեցման ենթակա կարգավորումների հիման վրա։

ՅՈՐԴԱՍԵ XIV

Չհակասելով միջազգային իրավունքով և Կողմերի՝ իրենց փոխադարձ հարաբե-րություններում կատարման համար պար-տադիր այլ պայմանագրերով ստանձնած իրավունքներին ու պարտականություններին՝ Կողմերը կձգտեն լուծել սույն Ցամաձայնագրի մեկնաբանման կամ կիրարկման վերաբերյալ ցանկացած վեճ ուղիղ խորհրդակցությունների միջոցով, այդ թվում՝ հողված XIII-ում նշված Ցանձնաժողովի շրջանակներում։ Եթե Նման խորհրդակցությունները 6 ամսվա ընթացքում երկու Կողմերի համար ընդունելի արդյունք չտան, ապա Կողմերը կփնտրեն վեճերի խաղաղ կարգավորման այլ միջոցներ։

ՅՈՐԴԱՍԵ XV

Չհակասելով հողված XIV-ին՝ սույն Ցա-մաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Կողմերը հետ կկանչեն, կչեղարկեն կամ այլ կերպ կլուծեն որևէ իրավական հարթակում ներկայացված ցանկացած և բոլոր միջպետական հայ-ցերը, գանգատները, բողոքները, առար-կությունները, վարույթները և վեճերը, որոնք վերաբերում են մինչև սույն Ցա-

մաձայնագրի ստորագրումը Կողմերի միջև գոյություն ունեցած խնդիրներին, և չեն Նախաձեռնի այդպիսի հայցեր, գան-գատներ, բողոքներ, առարկություններ, վարույթներ և որևէ կերպ չեն ներգրավվի որևէ երրորդ կողմի կողմից մյուս Կողմի դեմ ներկայացվող գանգատներում, բողոքներում, առարկություններում, վարույթներում։

Կողմերը դիվանագիտական, տեղեկատ-վական և այլ ոլորտներում որևէ կերպ չեն իրականացնի, խրախուսի կամ ներգրավվի միմյանց Նկատմամբ սույն Ցամաձայնագրին հակասող թշնամական գործողություններում և կանոնավոր խորհրդակցություններ կան-ցկացնեն այդ Նպատակով։

ՅՈՐԴԱՍԵ XVI

Ցամաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ազգային օրենսդրությանը հա-մապատասխան ներքին ընթացակարգերի ավարտի մասին ծանուցող փաստաթղթերի փոխանակումից հետո։ Սույն Ցամաձայնագիրը կզրանցվի Միավորված ազգերի կազմակեր-պության կանոնադրության 102-րդ հողվածին համապատասխան։

ՅՈՐԴԱՍԵ XVII

Սույն Ցամաձայնագիրը կնքված է հա-յերեն, ադրբեջաներեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր երեք տեքստերը հավասարազոր են։ Ցավասարագոր տեքստերից որևէ մեկի դրույթի նշանակության հետ կապված տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը։

Ալի Աբբար Վելայաթի. «Իրանը թույլ չի տա ամերիկյան միջանցքի ստեղծումը Կովկասում՝ անկախ Մոսկվայի դիրքորոշումից»

Սկիզբը՝ էջ 1

գորավարժություններ՝ ցույց տալու համար, որ Իրանի համար ազգային անվտանգությունը կարմիր գիծ է»։

Ալի Աբբար Վելայաթիի խոսքով՝ «պասիվ արձագանքի» փոխարեն «ակտիվ կանխարգելման» քաղաքականությունը Իրանի կողմից որդեգրված խելացի ռազ-մավարություն է։

Այսպես կոչված «Չանգեզուրի միջանցքը» առաջ մղելու փորձը կհանդիպի Իրանի կոշտ արձագանքին։ Այս մասին գրել է Իրանի Իսլամական Ցանրապետության գերագույն առաջնորդի խորհրդական Ալի Աբբար Վելայաթին X սոցիալական ցանցում։

«Չերթական անգամ որոշ կառա-վարություններ, ցուցադրելով իրենց սեփական շահերը և տարածաշրջանի շահերի Նկատմամբ անտարբերությունը, բարձրացրել են «Չանգեզուրի միջանցքի» հարցը և թակում են բոլոր դռները՝ առաջ մղելով իրենց անօրինական Նպատակները Ցարավային Կովկասում»,– գրել է Նա։

Ավելի վաղ Վելայաթին հայտարարել էր, որ այս Նախագծի իրականացումը Իրանին և Ռուսաստանին կներբաշի ցամաքային շրջափական մեջ։

05.08.2025

«Իրանը կարգելափակի Կովկասի ամե-րիկյան միջանցքը՝ Ռուսաստանի հետ մի-ասին կամ առանց Ռուսաստանի»,– մեկնա-բանելով Վաշինգտոնում եռակողմ հռչակագրի ստորագրումը՝ «Թասնիմ» գործակալությանը տված հարցազրույցում հայտարարել է Իրանի գերագույն հոգևոր առաջնորդի արտաքին քաղաքական հարցերով խորհրդական, Նախկին արտգործնախարար Ալի Աբբար Վելայաթին։

«Կովկասը աշխարհի ամենազգայուն աշխարհաբաղաքական կետերից մեկն է և այդ անցումը ոչ թե Թրամփի սեփակա-նությունը կդառնա, այլ գերեզմանի կվե-րածվի Թրամփի վարձկանների համար», – ասել է իրանցի պաշտոնյան։

Վելայաթիի խոսքով՝ ««Չանգեզուրի միջանցքի» ստեղծումը փոխում է տա-րածաշրջանում ստեղծված աշխարհա-բաղաքական իրավիճակը, հանգեցնում է սահմանների փոփոխության և միտված է Ցայաստանի մասնատմանը»։

09.08.2025

Իսլամական Ցանրապետության գե-րագույն առաջնորդ այաթոլլահ Սեյեդ Ալի Խամենեյի ավագ խորհրդականը ընդգծել է, որ Կովկասը պատմականորեն միշտ խաղացել է Իրանի համար ռազմավարական պաշտպանական բուժերի դեր։

Չին հույն պատմաբան և աշխարհագրա-գետ Չերոդոտոսի վկայություններով՝ հենց Կյուրոսն է ամրաշինություններ կառուցել Կովկասյան տարածաշրջանում՝ Իրանը բոջ-վոր ցեղերի ասպատակություններից պաշտ-պանելու համար։ Այս փորձը, ըստ Վելայաթիի, հաստատում է Կովկասի կայուն դերը որպես Իրանի պաշտպանական սահման։

Խորհրդականը կտրականապես մերժել է այսպես կոչված «Չանգեզուրի միջանցք» Նախագիծը, որը պետք է կապի Ադրբեջանը Նախիջևանի հետ։ Նրա խոսքով՝ այս ծրագրի իրականացումը անխուսափելիորեն կխաթարի ամբողջ Ցարավային Կովկասի անվտանգությունը։

26.08.2025

Հյուսիսից և արևելքից արդեն իսկ օկուպացված Սյունիքը շրջափակվում է նաև հարավից. ո՞ր մնաց ինքնիշխանության մասին մեր չդադարող բարբաջը

Սկիզբը՝ էջ 1

միայն կողմ չէ, ոչ միայն երաշխավոր չէ, այլ ստորագրման արարողությանը ներկա գտնվող անձնավորություն է՝ վկա:

Արձանագրենք նաև՝ այդ ճշակագրով Ադրբեջանը տիրոջ, փայատիրոջ իրավունք է ստանում ճայաստանի ճանրապետության ինքնիշխանության ներքո ի սկզբանե գտնվող Սյունիքի մարզի հարավային հատվածի նկատմամբ: Եվ որպեսզի ընթերցողի ու մեր միջև այս գրույցը փոխըմբռնման ու ողջամտության հունով ընթանա՝ հիշենք Յճակագրի 3-րդ և 4-րդ կետերը:

Ահա՝

«3. Մենք վերահաստատեցինք ներպետական, երկկողմ և միջազգային փոխադրումների համար երկու երկրների միջև հաղորդակցությունների բացման կարևորությունը՝ հիմնված պետությունների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և իրավագորության հարգման վրա, տարածաշրջանում ու նրա հարևանությամբ խաղաղությունը, կայունությունն ու բարգավաճումը խթանելու նպատակով: Այս ջանքերը կներառեն Ադրբեջանի Յանրապետության հիմնական մասի և Նախիջևանի Ինքնավար Յանրապետության միջև Յայաստանի Յանրապետության տարածքով անխոչընդոտ հաղորդակցությունը՝ Յայաստանի Յանրապետության համար միջազգային ու ներպետական հաղորդակցության փոխադարձ առավելություններով:

4. Յայաստանի Յանրապետությունն աշխատելու է Ամերիկայի Միացյալ Նահանգների և փոխադարձաբար համաձայնեցված երրորդ կողմերի հետ՝ Յայաստանի Յանրապետության տարածքում «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» («Trump Route for International Peace and Prosperity» (TRIPP)) հաղորդակցության ծրագրի իրականացման շրջանակը սահմանելու նպատակով: Մենք հաստատում ենք մեր վճռականությունը բարեխղճորեն ձեռնարկելու բոլոր միջոցները՝ սույն նպատակին հնարավորինս արագ կերպով հասնելու համար»:

Յիմա՛ եթե Յճակագիրն ամրագրում է, որ հաղորդակցությունները բացվում են՝ հիմնված «պետությունների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և իրավագորության հարգման վրա», ապա ինչպե՞ս հասկանալ Իլիամ Ալիևի հոխորտանքը՝ Ադրբեջանից Նախիջևան (և հակառակ ուղղությամբ) մեկնող արդբեջանցիներն անապարհին ոչ մի հայի չայտի հանդիպի: Իսկ եթե հանդիպի՞. Նորի՞ց պիտի Բաթու տարվի կամ մեզ մո՞տ պետք է պատասխանատվության ենթարկվի՞ խաղաղության գործընթացին վնասելու համար:

Եթե միմյանց տարածքային ամբողջականությունը հարգելու մասին է իռչակում փաստաթուղթը, ապա ինչո՞ւ բառ անգամ չի ասվում Սյունիքի հյուսիսից և արևելքից բռնագավթված հազարավոր հեկտար մեր հայրենական տարածքները վերադարձնելու մասին:

Եթե ճճակագրում ընդգծվում է «երկու երկրների միջև հաղորդակցությունների բացման կարևորությունը», ապա ինչո՞ւ խոսք չկա Գորիս–Կապան և Կապան–ճակատեն ճանապարհների ապաշրջափակման մասին, ինչո՞ւ խոսք չկա Երասխ–Ցուլֆա (Իրանի Իսլամական Յանրապետություն) երկաթգծի ապաշրջափակման մասին:

Եթե ճճակագրով իբրև սկզբունք է որդեգրվում կողմերի հավասարությունը, ապա ինչո՞ւ փոխադարձություն կամ հայելային պարտավորություն չկա Ադրբեջանի կողմից: Դե թող «Թրամփի ուղին», Մեդրուց բացի, ընդգրկեր նաև Նախիջևանի տարածքը (Ադրբեջանի Նախագահը, ըստ մամուլի, կտրուկ դեմ է արտահայտվել այդ գաղափարին):

Ակնհայտորեն երևում է, որ այս Նախագծի շահառուներն են Թուրքիան, Ադրբե-

ջանը, Իսրայելը, Անգլիան, ՆԱՏՕ–ն և, իհարկե, Միացյալ Նահանգները: Իսկ ո՞րն է Յայաստանի շահը, եթե միջանցքը գործելու է (ըստ Յճակագրի) մեր ինքնիշխանության ներքո: Ադրբեջանը, որպես ենթադրյալ միջանցքի լիարժեք փայատեր, որևէ մեկին հարկ չի վճարելու: Իսկ եթե շահույթ ստացվի (այլ երկրների՝ միջանցքից օգտվելու պարագայում), ապա Յայաստանին հավասար բաժին պետք է ունենա Ադրբեջանը, ավելի շատ է՞ Միացյալ Նահանգները:

Եվ ի՞նչ է ստացվում...

- Մենք մեր տարածքով ճանապարհ ենք տալիս Յայաստանի հանդեպ թշնամական գործողություններից դեռևս չիրաժարված Թուրքիային և Ադրբեջանին: Ընդ որում՝ ոչ թե տարանցիկ ճանապարհ, այլ միջանցք, որտեղ հայ մարդու մուտքն արգելված է լինելու (Իլիամի դիրքորոշումը մեզանում ոչ ոք չի կարող վիճարկել):
- Կյանքի է կոչվում «Մեծ Թուրան» ծրագիրը:
- Սյունիքի հարավում (որոշակի տարածքում) հարցականի տակ են դրվում հայոց ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Այդ դեպքում բարտեզը կարևոր չէ և ոչ էլ կարևոր է Ալմա Աթայի թղթի մասին շարակրատելը: Կարևորն իրավագորությունն է և այն, թե ում գնվորն է տվյալ վայրում գտնվելու:
- Մեծանում է հավանականությունը, որ «Ձանգեզուրի միջանցքի» շահագործման պարագայում (չնախատեսված ինչ–որ իրավիճակներում) Յայաստանը կներքաշվի տարածաշրջանային Նոր մրցակցության մեջ, իսկ Սյունիքը կդառնա ռազմական գործողությունների թատերաբեմ:

Չմոռանա՛նք՝ Ռուսաստանը և Իրանը շարունակում են մաս կազմել Յարավային Կովկասի ուժերի հարաբերակցության հաշվեկշռում: ՌԴ–ի ներկայիս չափավոր պահվածքը, Իրանից հնչող ոչ միանշանակ արձագանքները չեն կարող վկայել այն մասին, որ նրանք այլևս այստեղ չեն: Ավելին, ՌԴ–ն հայտարարություն է՝ տարածաշրջանում հաղորդակցության ուղիների կարգավորման բանալին 2020-ի Նոյեմբերի 9-ի հայտարարության 9-րդ կետն է, որից Յայաստանը չի հրաժարվել:

* * *

Յճակագիրն ընթերցելուց հետո ուրիշ հարցեր էլ են ծագում...

Օրինակ, եթե Միացյալ Նահանգները ստանձնում է «Ձանգեզուրի միջանցքի» սյուզերենությունը, ապա ինչո՞ւ չի ստանձնում նաև Յայաստանի Յանրապետության անվտանգության և տարածքային ամբողջականության երաշխավորի դերը:

Եվ իսկապես, ո՞վ կամ ո՞ր երկիրը, միջազգային ո՞ր կազմակերպությունն է ճճակագրի կատարման երաշխավորը լինելու, ծագող հարցերի լուծման արքիտոր լինելու:

Ադրբեջանը, իհարկե, միջազգային ոչ մի պայմանագիր չի կատարում և չի կատարելու, եթե հանկարծ ինչ–որ բան իր կամքին հակառակ լինի կամ եթե ինչ–որ անբարենպաստ (իր համար) հարց ծագի: Արցախի և Նաչիկի միջանցքի մասին միջազգային բազմաթիվ առյանների որոշումները թղթի վրա մնալու փաստը՝ ահավասի:

Կամ՝ Վաշինգտոնյան փաստաթղթերի թանաքը դեռ չչորացած՝ օգոստոսի 10-ին, Ադրբեջանի պետական հեռուստատեսությամբ հեռարձակվում է մի հաղորդում առ այն, որ «Ձանգեզուրի միջանցքը» իրականություն է դառնում իրենց պատմական տարածքներում Արևմտյան Ձանգեզուրում:

Իսկ Ամերիկան... Եթե մի օր, ասենք, ամենակրիտիկական պահին Միացյալ Նահանգներն այստեղից փախչի, ինչպես փախավ Աֆղանստանից, Իրաքից և մի շարք այլ երկրներից, ի՞նչ ենք անելու մենք:

Եվ, ի վերջո, ի՞նչ ասել է 99 տարով վարձակալություն կամ ապապատվիրակում: Նախիջևանն էլ հարյուր տարով (Մոսկվայի և Կարսի պայմանագրերով) տվեցինք Ադրբեջանին՝ հետագայում կարգավիճակը վերանայելու պայմանով: Վերանայեցի՞նք:

Թե որքանով է ողջամիտ գալիք սերունդների փոխարեն Սյունիքի այդ հատվածի ճակատագրի որոշումը, թե որքանով է սահմանադրական խնդրի այսկերպ լուծումը՝ քննարկման առանձին խոսք է: Բայց մի՞թե չէր կարելի պայմանավորվել, ասենք, 5-10-15 տարով, որպեսզի համոզվեինք դրա արդյունավետության, ողջամտության, խելամտության մեջ:

* * *

Արդյո՞ք Ռուսաստանի Դաշնությունն ու Իրանի Իսլամական Յանրապետությունը հեռանում են Յարավային Կովկասից...

Քաղաքագետների ու վերլուծաբանների մեծ մասի կարծիքով՝ Վաշինգտոնյան փաստաթղթերը Նախևառաջ ուղղված են Իրանի Իսլամական Յանրապետության ու Ռուսաստանի Դաշնության դեմ:

Ռուսաստանի Դաշնության դիրքորոշումը...

Օգոստոսի 11-ին ՌԴ Նախագահ Վ. Պուտինը ՅՅ վարչապետ Ն. Փաշինյանի հետ հեռախոսագրույցում հաստատել է Ռուսաստանի Դաշնության հավատարմությունը 2020-22 թթ. ամենաբարձր մակարդակով ստորագրված եռակողմ պայմանավորվածություններին, այդ թվում՝ տարածաշրջանում տրանսպորտային ուղիների ապաշրջափակմանը:

2020թ. Նոյեմբերի 9-ին Ռուսաստանի Դաշնության Նախագահի, ՅՅ վարչապետի և Ադրբեջանի Նախագահի կողմից ստորագրված եռակողմ հայտարարությունն ուժի մեջ մնալու մասին է հայտարարել նաև ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը:

Իսկ 2020 թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետով սահմանվել էր՝ **«Ապաշրջափակվում են տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերը: Յայաստանի Յանրապետությունը երաշխավորում է Ադրբեջանի Յանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Յանրապետության միջև տրանսպորտային հաղորդակցության անվտանգությունը՝ քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների՝ երկու ուղղություններով անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու նպատակով: Տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում են Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները»:**

Յիշենք, որ հայտարարությունը վավերացվել էր նաև ՅՅ վարչապետի ստորագրությամբ, ինչը մինչև իմա հետ չի կանչվել: Եվ դա այն դեպքում, երբ հայտարարության մյուս կետերը, որոնք ունեին շատ թե քիչ հայանպաստ ձևակերպումներ, չեն կատարվել:

Իրանի Իսլամական Յանրապետության դիրքորոշումը...

Օգոստոսի 8-ի ճճակագրի վերաբերյալ Իրանի Իսլամական Յանրապետությունում, ինչպես երևում է, կա երկու՝ իրարամերժ կարծիք:

Իրանի գերագույն հոգևոր առաջնորդի արտաքին քաղաքական հարցերով խորհրդական Ալի Աբբար Վելայաթին հայտարարում է՝ **«Եթե Սյունիքով ճանապարհը տրվի ԱՄՆ–ին, ապա Յուսիս–հարավ ճանապարհը պարալիզացվելու է, ՌԴ–ն զրկվում է լոգիստիկ ճանապարհից, որը գնում է Իրան և Յնդկական օվկիանոս, ինչը տնտեսական եռման օջախ է նաև մեզ համար: Իսկ «Ձանգեզուրի միջանցքը» որևէ տնտեսական օգուտի գործակից չի ներկայացնում իրենից: Իրանը կարգելափակի Կովկասի ամերիկյան**

միջանցքը՝ Ռուսաստանի հետ միասին կամ առանց Ռուսաստանի: Կովկասը աշխարհի ամենազգայուն աշխարհաքաղաքական կետերից մեկն է, և այդ անցումը ոչ թե Թրամփի սեփականությունը կդառնա, այլ գերեզմանի կվերածվի Թրամփի վարձկանների համար: «Ձանգեզուրի միջանցքի» ստեղծումը փոխում է տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը, հանգեցնում է սահմանների փոփոխության և միտված է Յայաստանի մասնատմանը»:

Մինչ այդ՝ հարցին ոչ պակաս սրությամբ զնահատական էր տվել քաղաքագետ Ձաֆար Մոհամմադզադեն:

Ահա՝ **«Եթե ԱՄՆ միջնորդությամբ Յայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության բանակցությունները հանգեցնեն ներկայիս աշխարհագրական սահմանների փոփոխության՝ «Ձանգեզուրի միջանցքի» պատրվակով, Իրանը կարող է և պետք է վերանայի երկու հանրապետությունների ճանաչումը: Այս պայմանագիրն Իրանի համար ավելի վնասակար է, քան Թուրքմենչայինը կամ Գյուլիստանինը»:**

Իսլամական հեղափոխության պահապանների կրպուռի ներկայացուցիչ Խասան Աբբասին էլ հայտարարում է, թե երկու հարյուր տարի առաջ՝ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով, Բաքվի հանրապետության ներկայիս տարածքը ժամանակավորապես՝ հարյուր տարով, օտարվել էր Պարսկաստանից: Ժամկետը վաղուց լրացել է, և Բաքվի հանրապետությունը պետք է վերադառնա Իրանի կազմ:

Սակայն բոլորովին այլ կարծիք ունի Իրանի Իսլամական Յանրապետության Նախագահ Մասուդ Փեզեշքիանը. **«Ամեն ինչ այնպես չէ, ինչպես ուռճացնում են Նորություններում: Իսլամական Յանրապետության պահանջները, որոնք կապված են այդ երթուղու հետ, հաշվի են առնվել... Տարածքային ամբողջականության հարցերը, ինչպես նաև այն, որ մեր ճանապարհը դեպի Եվրոպա կամ էլ հյուսիս փակված չէ, հաշվի են առնված: Միակ մտահոգությունն այն է, որ այդ ճանապարհը կառուցելու են ամերիկյան և հայկական ընկերությունները»:**

Արդյո՞ք ներպետական այդ հակասությունն իրական է, թե՞ դիվանագիտական խաղ: Եթե իսկապես նման հակասություն կա Իրանի հոգևոր առաջնորդի ու գործող Նախագահի միջև, ապա, ենթադրում ենք, արտաքին քաղաքականության մեջ առաջնայությունը տրվելու է հոգևոր առաջնորդի տեսակետին:

Եվ, այդուհանդերձ, չշտապենք եզրակացություններ անել ու սպասենք ստեղծված Նոր իրավիճակի վերաբերյալ Իրանի Իսլամական Յանրապետության դիրքորոշման հետագա հստակեցմանը:

* * *

Որքա՞ն տարածք է տրվելու ԱՄՆ–ին՝ Մեդրու տարածաշրջանից, «Թրամփի ուղին» ստեղծելու համար...

Թուրքիայում ԱՄՆ դեսպան Թոմաս Բարաքը, ով առաջինն էր բարձրաձայնել ենթադրյալ միջանցքը Միացյալ Նահանգներին արտապատվիրակելու մասին, հայտարարեց նաև՝ «Յայաստանն ու Ադրբեջանը վիճում են 32 կմ երկարություն ունեցող ճանապարհի շուրջ: Տվեք մեզ վարձակալության այդ ճանապարհը և բոլորով կօգտվենք դրանից»:

Օգոստոսի 8-ի Վաշինգտոնյան իռչականագրում, սակայն, հիշատակում չկա այն մասին, թե որքան երկարություն և լայնություն է ունենալու միջանցքը: Մինչդեռ՝ Շիրանաձոր (Արաքսի հունին զուգահեռ), ճանապարհի երկարության մասին տարբեր ժամանակներում տարբեր թվեր են շրջանառվել՝ 46 կմ, 43.5 կմ, 40 կմ...

Թվերի այս խաղի խորքում, սակայն, ադրբեջանաթուրքական հերթական որոգայթն է: Ադրբեջանը, ըստ այդ երկրի մամուլի հրապարակումների, Նռնաձորի (Երբեմնի Նյուվարդիի) հատվածը վաղուց իրենն է համարում՝ 10-12 կմ խորությամբ:

Ըստ երևույթին Ադրբեջանում թևածող այդ տրամադրությունն է հաշվի առել Թուրքիայում ԱՄՆ դեսպանը, երբ ենթադրյալ միջանցքի կամ հայ–իրանական սահմանի երկարությունը համարել է 32 կմ: Այդ ամենը ենթադրության տեղիք է տալիս, որ ակնկալվող սահմանագատման–սահմանագծման ընթացքում Նռնաձորի

Չավակների՝ հայրենատեր, ընթացքդ՝ հարատև

Կապանա տան զավակներին միավորող, նրանց իր գիրկը կանչող բաղաձայնը՝ «Չավակների՝ հայրենատեր, ընթացքդ՝ հարատև» կարգախոսով: Օգոստոսի 16-ի շաբաթօրյա առավոտյա եղանակն անբարենպաստ էր, այնուամենայնիվ, տոնական հանդիսությունների մեկնարկը սկսվեց Գարեգին Նժդեհի հրապարակում՝ համաբաղաձայն ֆլեշմոբով, որի միջոցով երիտասարդները միասնական շուրջպարով կապանցիներին կոչ արեցին մասնակիցը լինել տոնախմբությանը:

Ժամը 10-ին սկսվեց տոնին նվիրված պաշտոնական մասը՝ համայնքային իշխանությունների ներկայացուցիչները, ավագանու անդամները, բաղաձայնը հարգանքի տուրք մատուցեցին Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի և Սյունիքի՝ 1918-1920 թթ. ազատամարտի նշանավոր զորահրամանատար Պողոս Տեր-Դավթյանի հիշատակին՝ ծաղիկներ խոնարհելով նրանց կիսանդրիների պատվանդաններին:

Այնուհետև շքախմբին միացան հոգևոր դասի ներկայացուցիչներ, Ազգային ժողովի պատգամավորներ, մարզի մի շարք համայնքների ղեկավարներ, ովքեր այցելեցին Բաղաբուրջի հուշահամալիր, որտեղ էլ ծաղիկներ դրվեցին Արցախյան առաջին, 2016 թ. ապրիլյան բառօրյա և 2020 թ. 44-օրյա պատերազմներում նահատակվածների

շիրիմներին ու Սպարապետ Վազգեն Սարգսյանի կիսանդրու առջև:

Կեսօրին մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում նախատեսված էր հանդիսավոր նիստը. բայց մինչ այդ հանդիսության մասնակիցները կենտրոնի նախասրահում ծանոթացան «Հին ու Նոր Կապան» խորագիրը կրող ցուցադրությանը: Ներկայացված լուսանկարները վերակենդանացնում էին Կապանի անցյալն ու ներկան, բաղձր ու կարոտալի հուշեր արթնացնում...

Տոնական նիստին ներկաներին բարեմաղթանքի ու գնահատանքի խոսքեր են հղել Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի միջնկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն, հոգեշնորհի հայր Գարեգին վարդապետ Համբարձումյանը, Ազգային ժողովի պատգամավոր Աննա Գրիգորյանը, Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը:

Եղան նաև պարզևատրումներ, համայնքի զարգացման տարբեր ոլորտներում նշանակալի ներդրում ունեցած անձինք՝ Սերգեյ Առուստամյանը, Արտակ Թևակյանը, Կարմելա Հարությունյանը, Վահրամ Օրբելյանը, Արա Սարգսյանը, Արթուր Գաբրիելյանը, Տանյա Վարդանյանը, Համետ Հայրապետյանը համայնքի ղեկավարի կողմից արժանացան պատվոգրերի, շնորհակալագրերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված հուշադրամների:

Համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի որոշմամբ՝ համայնքում ճարտարապետության ոլորտի զարգացման, մշակութային



և գեղագիտական արժեքների ստեղծման գործում ներդրած նշանակալի ավանդի և մասնագիտական երկարամյա բեղմնավոր գործունեության համար Կապան համայնքի բարձրագույն՝ «Կապան» մեդալով է պարգևատրվել ճարտարապետ Յուրիկ Գևորգյանը:

Հանդիսավոր նիստի մասնակիցների համար ելույթ են ունեցել Կապանի մշակույթի կենտրոնի ժողովագրախների անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ Վարդան Զոհարյան) և համայնքապետարանի կանանց երգչախումբը (ղեկավար՝ Գայանե Հարությունյան):

Քաղաքի օրվա շրջանակում Կապանի արվեստի թանգարանում ցուցադրանք էր կազմակերպվել «Երբ խոսում են գույները» խորագրով, որտեղ բացառապես ներկայացված էին կապանցի գեղանկարիչների ստեղծագործություններ:

Հատկապես մարդաշատ էր քաղաքի կենտրոնական հրապարակը, ցուցահանդեսվաճառքին շնորհաշատ կապանցիները ներկայացրել էին բազմաթիվ արտադրանք: Շրջելով տաղավարներով՝ մարդիկ ոչ միայն

ծանոթանում էին ցուցադրված տեսականուն, այլև գնումներ կատարում: Տոնական միջոցառումներից անմասն չէին մնացել քաղաքի փոքրիկ բնակիչները, նրանց համար կազմակերպվել էր կրկեսային շոու-ծրագիր:

Քաղաքային տոնի շրջանակում ներառված էին նաև մարզական միջոցառումներ: Մասնավորապես, քաղաքային մարզադաշտում կայացավ 2025 թ. Կապան համայնքի ֆուտբոլային առաջնության եզրափակիչ հանդիպումը: Համառ պայքարում հաղթողի դավիտուն արժանացավ «Սպանդարյան» թիմը: Հաղթող և մրցանակային տեղեր գրաված թիմերն արժանացան համայնքի ղեկավարի կողմից սահմանված դրամական պարգևների:

Արդեն ավանդույթ է դառնում՝ Կապանի տոնի նախօրեին «Սյունյաց երկիր» թերթը հանդես է գալիս նախաձեռնությամբ՝ լույս ընծայելով մի հատուկ համար՝ ամսագրային տարբերակով, որ առնչվում է Կապանի պատմությանը: Նախորդ տարի այդ հատուկ համարը կրում էր՝ «Կապանը՝ Սյունիքի թագավորության մայրաքաղաք» խորագիրը:

Հարուսակությունը՝ էջ 6



Հատվածում, Ադրբեջանը բանակցային սեղանին կոնի տարածքային այդ պահանջը ևս:

Ինչպես նշեցինք, առաջմ որևէ խոսք չկա ենթադրյալ միջանցքի լայնության մասին:

Խնդրի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար տեղին ենք համարում հիշել տվյալ հարցի բնարկումը 2001 թվականին՝ Քի Վեսթում: Հայա-ադրբեջանական բանակցություններում հարցն այսպես էր դրված. Մեղրիով՝ Արաքսի ափով, Ադրբեջանին տրվելիք միջանցքը, որ ունենալու էր 40 կմ երկարություն և 8 մ լայնություն, չէր դառնալու Ադրբեջանի սեփականությունը: Սակայն, միևնույն ժամանակ, Ադրբեջանն այդ միջանցքից օգտվելու համար Հայաստանին որևէ հարկ չէր վճարելու: Սկզբնական շրջանում բնարկվում էր 40 կմ-ոց եստակադայով՝ կամրջակապով, Ադրբեջանն ու Նախիջևանը միմյանց կապելու տարբերակը, բայց այն չափից դուրս թանկ էր ստացվում: Ուստի և առաջարկվեց 8 մ լայնությամբ ճանապարհ Արաքսի ափով, որը Մեղրիի շրջանում բնակավայրի հանդիպելու դեպքում, դառնալու էր եստակադա, ապա կրկին իջնելու էր գետնի վրա: Դրանով նվազագույնի էր հասցվելու Ադրբեջանից

Նախիջևան և հակառակ ուղղությամբ ընթացող ադրբեջանցիների ու Մեղրիի բնակիչների շփումների հավանականությունը:

Հայկական բնակավայրերի մոտ էստակադաների կառուցումը՝ անցումը գետնից վեր բարձրացնելը, լուծում էր մեկ այլ խնդիր՝ Հայաստանի և Իրանի միջև ցամաքային կապի ապահովում: Ճիշտ է, մեծ հաշվով Հայաստանի տարածքը 8 մետրով նեղանում էր և բացի այդ, Հայաստանը կորցնում էր Արաքս գետից՝ ամբողջ 40 կմ երկարության վրա, օգտվելու հնարավորությունը, սակայն, մյուս կողմից, էստակադաների հատվածում Հայաստանը կարող էր ունենալ մեկից ավելի կամուրջ, որոնք միմյանց կկապեին Հայաստանն ու Իրանը, ինչպես այսօր դա իրականացվում է մեկ կամրջով: Հաշվի առնելով հայկական բնակավայրերի քանակն Արաքս գետի երկայնքով՝ կարելի է ասել, որ Հայաստանն ու Իրանն ամբողջ ցամաքային կապը կապահովեին Նոնաձորի, Ավանքի, Մեղրիի կայարանամերձ հատվածի և Ագարակի տարածքներով:

Վերջին հաշվով, սակայն, կողմերը հրաժարվել են այդ տարբերակի հետագա բնարկումից:

Այդ, այդպես էին 25 տարի առաջ պատկերացնում Մեղրիի ճանապարհը (հիարկե, այդ ժամանակ զուգահեռաբար բնարկվում էր Նաև. Լաչինի միջանցքի հարցը, որը պետք է ունենար 20 կմ լայնություն): Եվ միջանցք ասվածն այդ ժամանակ մեր տարածքում ենթադրում էր միայն ավտոճանապարհ, որի համար 8 մ լայնությունը բավարար էր համարվում:

Հիմա, սակայն, խոսքը ոչ միայն ավտոճանապարհի, այլև երկաթգծի, գազատարի, նավթամուղի և մալուխային գծերի մասին է: Գումարած այդ ենթակառուցվածքներին սպասարկող տարածքները: Ասել է թե՛ ենթադրյալ միջանցքի լայնությունը «Թրամփի ուղում» բազմապատիկ անգամ մեծ պետք է լինի, քան նախատեսվում էր 2001-ին: Որոշ վերլուծաբանների կարծիքով՝ մինչև 1-2 կմ լայնություն, ինչն (այդ դեպքում) էականորեն Նոր իրավիճակ կստեղծի տարածաշրջանում:

Այս ամբողջ պատմության մեջ՝ բազմաթիվ հարցականների խառնաշփոթում, չափազանց կարևոր մի հարց էլ կա, որ անշրջելի է եղել և՛ երեկ, և՛ այսօր՝ արդյո՞ք ՀՀ կառավարությունը ենթադրյալ միջանցքի հարցը գործնականում լուծելուց առաջ չի ուզում խորհրդակցել մեղրեցիների հետ, մի՞թե տեղի բնակիչների

կարծիքը չափի հաշվի առնվի:

Իսկ միգուցե Մեղրիի համայնքի բնակիչները կամ Մեղրիի համայնքի ղեկավարը տվյալ հարցով տեղական հանրապետության նախաձեռնեն, ինչի հնարավորությունն ընձեռում է «Տեղական հանրապետության մասին» ՀՀ օրենքը:

Մի հանգամանք ևս, որ ենթադրյալ միջանցքի պարամետրերը որոշելիս հնարավոր չի լինելու շրջանցել: Նկատի ունենք Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին և ՌԴ սահմանապահների ներկայությունը Մեղրիում՝ դրանցից բխող խնդիրներով:

Եվ ինչն է ուշագրավ այդ ամենից հետո՝ տղերքը՝ Երևանի հրահանգով, զուռնա-դիով, խոհանոցային փառատոներով են արձագանքում Սյունիքի հարավում հայոց ինքնիշխանության աճուրդ-հանդեսին:

Այլևս չենք էլ զարմանում ու զայրանում, չե՞ որ տեղական գործիչներից ոմանց համար հայոց ինքնիշխանությունից, Սյունիքի տարածքային ամբողջականությունից վեր ուրիշ ու վե՛հ արժեքներ էլ կան՝ երկատված պաշտոն, սեփական բիզնես, պետական ինդուլգենցիաներ...

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ
14.08.2025

Չավակներդ՝ հայրենատեր, ընթացքդ՝ հարատև

Սկիզբը՝ էջ 5

Այս տարվա թողարկումը նվիրված էր մեր մեծ հայրենակցին՝ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանին: Ամսագրի շապիկին գրառում է՝ «Հայոց մեծ Արամը՝ Կապանա տնից»:

«Կապանի ակումբագրադարանային միավորում» ՀՈԱԿ-ի էլեկտրոնային գրադարանում տեղի ունեցավ պետականակերտ և պատմական Արամ Մանուկյանին նվիրված հատուկ համարի շնորհանդեսը, որին մասնակցում էին Կապանի և Գորիսի բաղադրություններ Գևորգ Փարսյանն ու Առուշ Առուշանյանը, Ազգային ժողովի պատգամավորներ Գառնիկ Դանիելյանը, Աննա Գրիգորյանը, Քրիստինե Վարդանյանը:

Օրվա խորհուրդը մանրամասնեց և հատուկ թողարկման համար թերթի խմբագրակազմին արժանին մատուցեց Տաթևի վանքի վանահայր, տեր Սահակ վարդապետ Շաքարյանը:



«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը նախ երախտագիտություն հայտնեց Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանին՝ ամսագրի նախաձեռնության հեղինակին, ապա՝ ընդհանուր գծերով ներկայացրեց համարը:

Համարում տեղ են գտել ուշագրավ դեպքեր Արամ Մանուկյանի կյանքից, և դա պատահական չէ: «Ես շատ քիչ օրինակներ գիտեմ, որի կերպարն այդքան ընթերցանելի լինի կամ պատասխան լինի այն հարցին, թե ի՞նչ ասել է պետություն, պետականություն և առհասարակ պետական մտածողություն: Այս ամսագրում այդ բոլոր հարցերի պատասխանը տրված է Արամ Մանուկյանի օրինակով...», – ասաց բանախոսը:

Շնորհանդեսի հրավիրյալ հյուրերն էին պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի ազգային արխիվի նախկին տնօրեն Ամատունի Վիրաբյանը և պատմաբան Արմեն Ասրյանը, ովքեր իրենց ելույթներով և բերած պատմական տվյալներով ամբողջացրին Արամ Մանուկյանի կերպարը:

Կապանի տունը եզրափակվեց համերգներով՝ նախ՝ Մշակույթի կենտրոնի հարակից տարածքում՝ Մշակույթի կենտրոնի երաժշտական խմբերի մասնակցությամբ:

Այնուհետև տոնական շքահամերգն էր՝ բեմում Սոֆի Մխեյանն էր, Երիկ Կարապետյանը և «Hayat Project»-ը:

Եղավ նաև խաղարկություն, Կապանի օրվան նվիրված միջոցառումների հաջողակ մասնակիցը դեպի Եգիպտոս խաղարկվող ուղևորության հաղթողը էլն Գաբրիելյանն էր: Իսկ ամենավերջում դիպկոտեկ էր, որ շարունակվեց մինչև ուշ գիշեր...

ՎԱՀՐԱՆ ՕՐԲԵԼՅԱՆ

Քաղաքի տունը՝ հազարավոր գորիսեցիների մասնակցությամբ

«Գորիսյան օրեր» տոնակատարությունը, իբրև քաղաքի տուն, որ նշվում է 1970-ական թվականներից, այս անգամ տեղի ունեցավ օգոստոսի 15-ին:

Օրը վերածվեց համաժողովրդական իսկական տոնախմբության հատկապես երեկոյան ժամերին, երբ Գորիսի Տաթևացու անունը կրող հրապարակում տեղի էր ունենում համերգ: Մայրաքաղաքից ժամանած երգիչ-երգչուհիները բարձրավազտ կատարումներով կարողացան ներկաներին պարզեցնել բարձր տրամադրություն և առօրյա հոգսերից շատ թե քիչ կտրվելու հնարավորություն:

Մինչ այդ էլ Գորիսի Տաթևացու հրապարակը տոնական միջոցառումների կենտրոնատեղի էր:

Հայկական ավանդական տարազների ցուցադրմամբ հանդես եկավ «Տերյան մշակութային կենտրոն»-ը, իսկ պարային համարների կատարմամբ՝ «Լիլի Նարինյան» պարային համույթը:

Տունը թեև քաղաքային էր, բայց ունեցավ համայնքային բովանդակություն ու տրամաբանություն:

Գորիս էին եկել համայնքի բնակավայրերի ներկայացուցիչները: Եկել էին ուշաքանդակողներ և զբոսայգու և Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի բակում կազմակերպված տարատեսակ ու բազմաբովանդակ միջոցառումները: Իսկ տոնական օրը մեկնարկեց Գորիսի ամենանշանավոր անկյուններից մեկը դարձած Ակսել Բակունցի տուն-թանգարանից:

Ի դեպ, քաղաքի տունը համընկել էր «Կյոթես. գիտամշակութային օրեր-2025» նախաձեռնության հերթական փուլին: Տարածաշրջանի մշակութային ժառանգությամբ հետաքրքրվող բազմաթիվ գորիսեցիներ տուն-թանգարանի այգում ունկնդրեցին բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թեմիկա Մարությանի բանախոսությունը՝ «Բակունցը, Գևորգյան եղբայրները և Խոտորջրի կոմունան. փաստագրական բացահայտումներ» թեմայով:

Տուն-թանգարանում միաժամանակ մերօրյա հայ գեղանկարիչներից մի քանիսի՝ Գորիսյան թեմաներով ստեղծագործությունների ցուցահանդես էր՝ Արթուր Հովհաննիսյան, Արթուր Մարտիրոսյան, Հրաչյա Սաֆարյան, Արտաշես Աբրահամյան: Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտական ազգային կենտրոնի Գորիսի մասնաճյուղի ղեկավար Արամ Մաշուկյանի տեղեկացմամբ՝ ցուցահանդեսը նվիրված էր մեծանուն գեղանկարիչ և լուսանկարիչ, Գորիսի նշանավոր զավակ Գուրոսի 120-ամյակին:

Ցուցահանդեսը հետաքրքիր նախաձեռնության արդյունք էր. մի խումբ գեղանկարիչներ օրեր շարունակ շրջագայել էին Գորիսի տարածաշրջանում և ստացած տպավորություններով ծնունդ տվել գեղանկարների, որոնք ցուցադրվում էին տոնական օրը: Ներկայացված էին նաև վերոնշյալ կենտրոնի շնորհալի սաների երվանագրերը:

Տուն-թանգարանում տեղի ունեցած միջոցառումները համեմվեցին Գորիսի Վ. Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնի դերասաններ Միքայել Մաշուկյանի և Էվմիրա Լալաբեկյանի՝ Գորիսյան հյուրասիրության վերաբերյալ իմպրովիզացիայով՝ հիմքում ունենալով Բակունցի «Միրիադ»-ը, Գուսան Աշոտի անվան ժողգործիկների համույթի մենակատար Ջիվան Գևորգյանի, ինչպես և Աշոտ Սաթյանի անվան երաժշտական դպրոցի սաների ելույթներով:



Եվ, այդ բոլորով հանդերձ, հնարավոր չէ

լինել տուն-թանգարանում ու վերստին չհաղորդակցվել թանգարանի ցուցանմուշներին, Բակունցի կյանքին ու գործունեությանն առնչվող նշխարներին, ինչին ականատես եղանք նաև այդ օրը:

Գորիսի տունն ամեն տարի, ինչպես տեսնում ենք, կազմակերպվում է թարմացված-նորացված ծրագրով, ինչը դրվատելի է: Սակայն մի դրվագ մշտապես տեղ է գտնում ծրագրում. դա Մաշտոցի փողոցում՝ Ակսել Բակունցի տուն-թանգարանից մինչև Մխիթար Սպարապետի անվան հրապարակ կազմակերպվող յուրատեսակ հյուրասիրությունն է: Փողոցի տներից յուրաքանչյուրի դիմաց տանտերերը տոնական սեղան էին բացել՝ ազգային խոհանոցի բազմապիսի ուտեստներով՝ այդպես դիմավորելով հատկապես Գորիս ժամանած հյուրերին:

Իսկ քաղաքի նախակրթարանների սաները, համայնքի երաժշտական համույթները փողոցի տարբեր հատվածներում հանդես էին գալիս հետաքրքիր ելույթներով, նաև ասմունքով՝ երբեմն համեմված գորիսյան քաղցրանուշ բարբառով, ինչն ավելի էր խտացնում տոնական մթնոլորտը:

Գեղարվեստական խմբերի մեջ էին Հարություն Առուստամյանի գլխավորած «Չանգեզուր» դիոլախարների համույթը, ինչպես և «Վահե Մելքունյան» պարային դպրոցի սաները:

Տոնի համաքաղաքային տրամաբանությունը ենթադրում է, որ նման կամ գրեթե նման տոնախմբություններ կազմակերպվեն նաև քաղաքի մյուս փողոցներում, ինչին, կարծում ենք, ականատես կլինենք հաջորդ տարիներին:

Օրվա ուշագրավ բաղադրիչներից մեկն էլ մարզի համայնքների ղեկավարների, բազմաթիվ հյուրերի, զբոսաշրջիկների, նաև Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների պատվիրակների ներկայությունն էր: Գորիսի տունը, որքան էլ ավանդական էր, որքան էլ հին օրերի նորոգյա շարունակությունն էր, ուներ մի կարևոր առաքելություն ևս (այդպես էր համեմայնդեպս դիտվում-ընկալվում կողքից)՝ լույսի և հույսի շողերով ճեղքել այն մեզմշուշը, որով ներկայումս պարփակված է մեր բնօրրան Սյունյաց աշխարհը: Կարծում ենք՝ կարևոր այդ խնդիրը նույնպես լուծվեց՝ տրամադրություն և լավատեսություն հաղորդելով հնամենի, բայց և նորացվող Գորիսին ու նրա մարդկանց:

Ասվածին հավելենք մեր (և ոչ միայն) գնահատանքի խոսքը Գորիսի համայնքային իշխանությանն ու նրա ղեկավար Առուշ Առուշանյանին, որ կազմակերպական ու ստեղծագործական ջանքեր էին գործադրել Գորիսի տունը հերթական անգամ ըստ արժանվույն նշանավորելու համար:

ԱՆՆԱ ԱՆԵՋԱՆՅԱՆ
ԼՈՒԻՍԱԿԱՐՆԵՐԸ՝ ՄԱՐԻԱՍ
ԼԱՆՈՐՅԱՆ





Քաջարանում նշվեց քաղաքի օրը

Յուրաքանչյուր քաղաք ունի ծննդյան վկայական: Քաջարանի համար ծննդյան թվականը 1958 թվականի օգոստոսի 21-ն է: Այդ օրը ճայական ԽՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Քաջարան քաղաքատիպ անվանը դասվեց ճայաստանի շրջանային ենթակայության քաղաքների շարքը: Վերջին տարիներին ավանդաբար նշվում է քաղաքի օրը:

Օգոստոսի 24-ին Քաջարանը տոնեց հիմնադրման 67-րդ տարեդարձը: Կեսօրին տոնակատարության հյուրերին դիմավորեցին քաղաքի կենտրոնական հրապարակում, որտեղ քաջարանցի ստեղծագործողների ցուցահանդես էր կազմակերպվել, առանձին տաղավարով ներկայացված էր Իրանի Իսլամական Հանրապետության Կապանի հյուպատոսությունը՝ իրանական ապրանքների տեսականիով: Այդտեղ անցկացվեց նաև Նարդու առաջնությունը: Հաղթողն ու մրցանակակիրները արժանացան դրամական պարգևների: Ժամը 13:00-ին Քաջարանի պանթեոնում հարգանքի տուրք մատուցվեց մերօրյա պատերազմներում Նախատակածների հիշատակին: Սյունյաց թեմի առաջնորդ տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանը կատարեց հոգեհանգստյան արարողություն, այնուհետև ծաղիկներ դրվեցին գոհերի շիրիմներին: Քաղաքի օրվան նվիրված գլխավոր իրադարձությունը հանդիսավոր նիստն էր,

շաճող խոսքով հանդես եկավ Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանը: Քաղաքի բարգավաճման գործում ունեցած ավանդի համար մի սովոր խումբ քաջարանցիներ արժանացան համայնքապետարանի պատվոգրերի, շնորհակալագրերի, հուշանվերների և դրամական պարգևների: Վերջում Նիստի մասնակիցների համար տրվեց համերգ: Մշակույթի պալատի հարակից հատվածում Նիստից հետո ելույթ ունեցավ ճայաստանի պարի պետական անսամբլը (գլխավոր



որ տեղի ունեցավ Քաջարանի մշակույթի պալատում: Նախ ներկաներին մի քանի կատարումով դիմավորեց դիոխահարների խումբը: Քաղաքի հիմնադրման 67-րդ տարեդարձի առթիվ ներկաներին բարեմաղթանքներ և շնորհավորանքների խոսքեր ուղղեցին Սյունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանը, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Դուկասյանը, Հանգեգուրի պղնձամուլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրենի տեղակալ Արթուր Նիկողոսյանը: Ցուցադրվեց տեսաֆիլմ՝ Քաջարանի՝ վերջին մեկ տարում կատարված կառուցապատումներին և բարեփոխումներին առնչվող, որից հետո օրվա խորհրդին պատ-

բալետմայստեր՝ Գագիկ Կարապետյան), որի բարձրակարգ կատարումներն անտարբեր չթողեցին ոչ ոքի: Տոնակատարության մասնակիցները բաժակ բարձրացրեցին Քաջարան քաղաքի հարատևության համար: Քաղաքի կենտրոնական հատվածում կազմակերպվել էր գաստրո ցուցահանդես և հյուրասիրություն: Համերգային ծրագիրը շարունակվեց քաղաքային մարզադաշտում: Տեղի ունեցավ Ռազմիկ Ամյանի մենահամերգը՝ «Կարեն-Սևակ» բեկորի մասնակցությամբ: Իսկ ամենավերջում տոնական գունագեղ հրավառություն էր...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ



Փուխրուտի եկեղեցու երկրորդ կյանքը

Քաջարան համայնքի Փուխրուտ գյուղն այլևս գործող եկեղեցի ունի: Օգոստոսի 25-ին տեղի ունեցավ բնակավայրի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու օծման արարողություն՝ Սյունյաց թեմի առաջնորդ, գերաշնորհ տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանի հանդիսապետությամբ և հոգևոր դասի մասնակցությամբ: Ըստ ամենայնի՝ դա Նախօրեին տեղի ունեցած Քաջարանի օրվան նվիրված տոնակատարության շարունակությունն էր: 17-րդ դարում վերաշինված եկեղեցին տխուր ճակատագիր կունենար, եթե

Նախևառաջ, Դավիթ Համբարձումյանը ջանացել էին, որ տոնական օրը գյուղում կազմակերպվի պատշաճ մակարդակով և դա հաջողվեց: Օրվա խորհուրդը բարեմաղթանքի խոսքերով արժևորեցին Քաջարանի տարածաշրջանի հոգևոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանը, եկեղեցու նորոգման Նախաձեռնության հեղինակ Արմեն Ավետիսյանը, փուխրուտցիներ Հասմիկ Համբարձումյանը, Լիլիթ Իսրայելյանը, Կարեն Թադևոսյանը: Հիշեց նաև երգ-երաժշտություն, պարային



փուխրուտցիները չձեռնարկեին հավատի այդ տաճարի վերակառուցման աստվածահաճո գործը: Սանկտ Պետերբուրգում բնակվող հայտնի բժիշկ, այդ քաղաքի թոքաբանության ինստիտուտի թոքային վիրաբուժության բաժնի վարիչ Արմեն Ավետիսյանի Նախաձեռնությամբ 2018 թվականին դրամահավաք կազմակերպվեց, և սկսվեց խոնարհված եկեղեցու նորոգման աշխատանքները: Գործին նեցուկ եղավ, Նախևառաջ, Հանգեգուրի պղնձամուլիբդենային կոմբինատը, Քաջարանի համայնքապետարանը և այլ բարերարներ, ովքեր չցանկացան, որ իրենց անունը հրապարակվի: Եկեղեցու օծման օրը մարդաշատ էր գյուղը: Նորոգ եկեղեցում կատարվեց օծման կարգ, սուրբ մեռնոնով օծվեցին խորանը, պուրները: Մնում է հուսալ, որ նորոգ եկեղեցին որոշ աշխուժություն կհաղորդի դատարկված գյուղին, որ միայն ամռանն է կենդանության նշաններ ցույց տալիս հովիվների հաշվին: Արարողությանը մասնակցում էին Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանը, ԱԺ պատգամավոր Աննա Գրիգորյանը, Հանգեգուրի պղնձամուլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրենի տեղակալ Արթուր Նիկողոսյանը, կոմբինատի կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը: Կազմակերպիչները,

կատարումներով հանդես եկան Քաջարանի արվեստի դպրոցի և մշակույթի պալատի սաները: Տոնական արարողությունից հետո համայնքապետ Մանվել Փարամազյանի կողմից մատուցվեց մատաղ: Քաջարան համայնքում Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին դարձավ չորրորդ գործողը, մինչ այդ գործող էին դարձել Վերին Հանդ գյուղի Սուրբ Աստվածածինը, Քաջարանց գյուղի Սուրբ Հակոբը, Քրդիկանցի սուրբ Աստվածածինը: Փուխրուտը պատմական Ձորը գավառի հինավուրց գյուղ է՝ Նախկինում անվանվել է Բեխորոտ: Բնակավայրի մասին առաջին հիշատակումը Տաթևի վանքի հին հարկացուցակում է՝ ամրագրված Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն Նախանգին Սիսական» աշխատության մեջ: Ըստ ավանդության՝ Դավիթ Բեկի ազատագրական բանակին գյուղերից ամենաշատ քանակով ձիավոր է հատկացրել Փուխրուտը: 1736 թվականին այս գյուղով է անցել Աբրահամ Կրետացի կաթողիկոսը, որ գնացել է Մուղան՝ մասնակցելու Նախիջ թագադրությանը: Փուխրուտում 1686 թվականին չբնաղ մի ավետարան է ստեղծվել, որ այժմ պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ



Միջոցառումը կյանքի է կոչվել Տուրիզմի հայկական ֆեդերացիայի և «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» հասարակական կազմակերպության համատեղ մտահղացմամբ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Տուրիզմի կոմիտեի, Սյունիքի մարզպետարանի և Սիսիանի քաղաքապետարանի աջակցությամբ:

”

Սիսիանում՝ «Նավասարդ» հայ-իրանական մշակութային-խոհանոցային փառատոն

Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում օգոստոսի 10-ին մեկնարկեց արդեն ավանդական դարձած «Նավասարդ» հայ-իրանական մշակութային-խոհանոցային փառատոնը:

Միջոցառումը կյանքի է կոչվել Տուրիզմի հայկական ֆեդերացիայի և «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» հասարակական կազմակերպության համատեղ մտահղացմամբ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Տուրիզմի կոմիտեի, Սյունիքի մարզպետարանի և Սիսիանի քաղաքապետարանի աջակցությամբ:

«Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀՀ նախագահ Սեդրակ Մամուլյանի խոսքով՝ խոհանոցի միջոցով կարելի է երկխոսություն ծավալել երկու հարևան ու բարեկամ ազգերի միջև:

«Խոհանոցն իր բովանդակությամբ մեջ թույլ է տալիս, որ մենք կարողանանք շփվել, կիսվել, հարաբերվել, ինչպես նաև ինչ-որ իմաստով երկխոսություն ծավալել»,– համոզմունք հայտնեց Մամուլյանը:



Նրա տեղեկատվությամբ՝ միջոցառման շրջանակներում անցկացվող խոհարարական մրցույթն ընդգրկում է երեք անվանակարգ՝ «Լավագույն համ», «Լավագույն ուտեստ», «Լավագույն մտահղացում»:

Ընդհանուր առմամբ՝ փառատոնին ներկայացված էր 90-92 տաղավար, որից 32-ը հրանի ներկայացուցիչների կողմից:

«Այսինքն՝ միջոցառումը կայացել է և ամբողջ Հայաստանի բնակչությունը

սպասում է միջոցառմանը, բայց իհարկե, ամենաառաջին շահառուները սյունեցիներն են ու կոնկրետ Սիսիանի բնակչությունը: Հենց իրենք պետք է շահույթ ունենան, շփվեն, հարաբերվեն, ինչ-որ բան պլանավորեն հյուրերի, հատկապես՝ հրանից այցելած հյուրերի հետ»,– ներկայացրեց ՀՀ նախագահը:

Նրա տեղեկատվությամբ՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որպեսզի միջո-



ցառումը լինի երկօրյա:

Մասնավորապես՝ երկրորդ օրը տեղի ունեցան Նավասարդի տոնին բնորոշ մարզական խաղեր, ռազմախաղեր, ծիսական երգ-երաժշտություն և այլն:

Կապանում հրանի գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեղին Վարամին ուրախությամբ նշեց, որ արդեն երրորդ տարին է, ինչ մասնակցում է Նավասարդյան տոնակատարությանը:

Նա շնորհակալությունը հայտնեց Սիսիանի համայնքապետին և քաղաքապետարանի անձնակազմին՝ նման գեղեցիկ միջոցառում կազմակերպելու համար:

«Այս փառատոնի արդեն քառամյա անցկացումն արդեն ցույց է տալիս մեր երկու երկրի ջերմ ու խաղաղ հարաբերությունը: Ամեն տարի ավելի ճոխ ու հարմարավետ է ներկայացվում: Դա շատ բնական է, ինչը զալիս է մեր հազարավոր տարիների պատմությունից»,– ասաց հրանի գլխավոր հյուպատոսը:

Նրա խոսքով՝ Սիսիանի քաղաքապետի հետ՝ միջոցառումից առաջ, մի շարք խնդիրներ են քննարկվել, և նախատեսվում է շատ շուտով Սիսիանի ու իրանական որևէ քաղաքի միջև համագործակցություն ստեղծել:

«Մենք Սյունիքի և հրանի որոշ քաղաքների միջև համագործակցություն ունենք և հույս ունենք, որ Սիսիանի համար ևս նման հնարավորություն կընձեռվի»,– եզրափակեց գլխավոր հյուպատոսը:

”



Չորս տասնամյակ առաջ՝ օգոստոսի 1-ին, Վահրամ Օրբեյանը Կապանի շրջանային «Ղափան» թերթում սկսեց լրագրողական գործունեությունը: Զառասուկից մոտ 30 տարին աշխատել և աշխատում է տարածաշրջանային կամ մարզային լրատվամիջոցներում:



Վահրամ Օրբեյանի լրագրողական գործունեության 40-ամյակը

Շնորհավորելով մեր գործընկերոջը՝ այդ հոբբեյանի առթիվ, նաև մի քանի հարց ուղղեցինք նրան:

– Ինչպե՞ս եղավ, որ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը գերազանցությամբ ավարտած Վահրամ Օրբեյանը վերադարձավ ծննդավայր և նախընտրեց լրագրողի մասնագիտությամբ աշխատել ու ընդգրկվեց Կապանի շրջանային թերթի ստեղծագործական թիմում:

– Երբ ավարտեցի Երևանի պետական լսարանի բանասիրական ֆակուլտետը և վերադարձա հայրենի քաղաք, շրջանային «Ղափան» թերթում գրական աշխատողի թափուր տեղ կար. այդտեղից էլ սկսվեց աշխատանքս լրագրության ասպարեզում:

Մի բան էր համալսարանական կրթությունը, բոլորովին այլ բան՝ գործնական լրագրությունը:

Հիշում եմ՝ առաջին թղթակցությունս Ղափանի պահածոների գործարանի առօրյայի մասին էր՝ «Պահածոյագործների մոտ» վերնագրով: Ամառ էր, մրգերի և հատապտուղների պահածոյացման շրջան...

Ասեմ, որ պարտադրված և «սեզոնային» թեմաները բնորոշ էին խորհրդային ժուռնալիստիկային:

Լրագրողական աշխատանքիս սկիզբը համընկավ անցումային ժամանակաշրջանի հետ. փլուզվեց Խորհրդային Միությունը, և հայտնվեցինք միանգամայն նոր իրականության մեջ: Քաղաքական կյանքում էլ դարակազմիկ իրադարձությունների պակաս չկար՝ Ղարաբաղյան շարժում, Արցախյան գոյամարտ, իշխանափոխություն հանրապետությունում, որի հետևանքով ստեղծվեց Հայաստանի երրորդ հանրապետությունը:

Լրատվության ոլորտում էլ անդառնալիորեն փոխվեցին ընկալումներն ու մոտեցումները:

– Ու՞մ էք համարում լրագրության ոլորտի Ձեր ուսուցիչը կամ ո՞վ էր այն լրագրողը, որին ուզում էիք ընթերցանակել կամ նմանվել:

– Լրագրության ոլորտի իմ ուսուցիչը, ավելի ստույգ՝ ուսուցիչներս համարում եմ իմ խմբագիրներին, որոնց հետ բարեխառնություն եմ ունեցել ճանապարհ անցնել՝ Եղվարդ Սարգսյան, Վաչե Եփրեմ-

յան, Գագիկ Դավթյան, Սամվել Ալեքսանյան: Բոլորից, անկասկած, մի բան սովորել եմ: Առաջին խմբագիրս Եղվարդ Սարգսյանն էր, ում պարտական եմ, նախևառաջ, գրավոր տեքստի խմբագրման հմտություններ ձեռք բերելու առումով:

– Չորս տասնամյակի ընթացքում շատերի հետ եք աշխատել: Ո՞ւմ կուզենայիք Ձեր գործընկերներից այսօր հիշել:

– Հիմա կարոտով եմ հիշում «Ղափան» թերթի ժամանակները, իմ գործընկերներին՝ Արթուր Իսրայելյան, ով նաև իմ համալսարանական կուրսընկերն է եղել, Արտյոմ Սարգսյան, Սլավիկ Նավասարդյան, Սիլվա Սահակյան, որոնց հետ հին ու բարի ժամանակների չխամրող հուշեր կան կապված:

Օգտվելով առիթից՝ առանձնահատուկ երախտագիտությունս եմ հայտնում «Սյունյաց երկրի» խմբագրակազմի իմ սիրելի գործընկերներից յուրաքանչյուրին: Նրանք ոչ միայն պրոֆեսիոնալներ են, այլև Սյունյաց աշխարհի նվիրյալներ և, իհարկե, լավ մարդիկ, լավ գործընկերներ: Երբ, առիթի դեպքում, հետադարձ հայացք եմ ձգում մեր գործունեությանը, զարմանք եմ ապրում այս փոքրաթիվ կոլեկտիվով ինչպե՞ս ենք հասցրել այսքան մեծ ու մայուն գործեր ստեղծել:

– Ի՞նչ է լրագրությունը Ձեզ համար:

– Թող վերամբարձ չինչի՝ լրագրությունն ինձ համար կենսակերպ է, աշխարհին հաղորդակցվելու փիլիսոփայություն: Եվ ամեն Աստծո օր ես խմբագրության ճամփան եմ բռնում... Այլ կերպ աշխատանքային օրվա սկիզբս չեմ պատկերացնում:

Ինձ բախտավոր եմ համարում, որ մասնակից եմ եղել ու կամ «Սյունյաց երկրի» հատուկ համարների, «Սյունյաց երկրի. մշակութային» հանդեսի նյութերի պատրաստմանն ու հրատարակմանը: Առանց չափազանցության՝ դրանցից յուրաքանչյուրը հանրագիտարանային և սկզբնաղբյուրային նշանակություն ունի: Եվ նման համարներ, թող ինքնագովություն չլինի, միայն մեր կոլեկտիվը կարող էր հրատարակել:

Հպարտություն եմ ապրում, երբ իմանում եմ, որ հանրակրթական դպրոցների շատ-շատ երեխաներ, բուհերի ուսանողներ, նույնիսկ դասախոսներ և մանկավարժներ՝ հայագիտական առարկաների ուսումնասիրության ընթացքում փնտրում և ծանոթանում են «Սյունյաց երկրի» բացառիկ համարներին:

– Եթե հրաշք կատարվեր ու պատմության անիվը հետ շրջվեր և Նորից աշխատանքային գործունեությունը սկսելու հնարավորություն ունենայիր՝ արդյո՞ք Նորից կընտրեիք լրագրողի մասնագիտությունը:

– Լրագրությունն այնպիսի հաստատուն տեղ է գրավել իմ մեջ... Չեմ պատկերացնում, որ եթե Նորից սկսվեր աշխատանքային գործունեությունս, մի այլ մասնագիտություն ընտրեի:

– Ձեր լրագրողական գործունեության ընթացքում բազմաթիվ նշանավոր մարդկանց եք հանդիպել, զրույց վարել կամ նրանց մասին ակնարկներ պատրաստել: Ո՞վ կամ ովքե՞ր են նրանցից առավել շատ տպավորություն թողել կամ մնացել Ձեր հիշողության մեջ:

– Մանավանդ «Սյունյաց երկրում» աշխատելիս՝ ժամանակ առ ժամանակ Սյունիքի նշանավոր մարդկանց և կարևոր իրադարձություններին հատուկ թողարկումներ ենք ունեցել՝ որոշներն ամսագրային տարբերակով: Եվ հնարավորություն եմ ունեցել մայրաքաղաքում հարցազրույցներ ունենալ հանրաճանաչ կոմպոզիտորներ Եղվարդ Միրզոյանի, Տիգրան Մանսուրյանի, աստղաֆիզիկոս Պարիս Հերոնու, ճանաչված երգիչներ Ռուբեն Մաթևոսյանի, Օթելյա Համբարձումյանի, գրականագետներ Դավիթ Գասպարյանի, Սամվել Մուրադյանի, պատմաբան Ամատունի Վիրաբյանի, հանրապետության գրական, մշակութային շատ ու շատ գործիչների հետ:

«Սյունյաց երկրի» ստեղծագործական խմբի կազմում՝ տարիների ընթացքում, բազմիցս եղել եմ և՛ Արցախի առաջնագծում, և՛ Հայաստանի Հանրապետության սահմաններում՝ հայոց զինվորների կողքին: Այդ այցելություններից և ոչ մեկը հնարավոր չէ մոռանալ:

– Լրագրողական գործունեությունը, հատկապես մեր օրերում, հնարավոր չէ պատկերացնել առանց փորձությունների, լարված կամ հակասական իրավիճակների: Կարո՞ղ եք նման մեկերով դեպք հիշել:

– Ոչ միայն մեր օրերում, այլև բոլոր ժամանակներում լրագրողի համար փորձություններ լինում են:

«Սյունյաց երկիր» իր ծննդյան օրվանից՝ 2003 թվականից, բազում փորձությունների միջով է անցել, աներևակայելի իրավիճակներում հայտնվել և խոչընդոտների հանդիպել: Ճիշտ է՝ իրադարձությունների կենտրոնում Սամվել Ալեքսանյանն էր, նա էր թիրախավորվում (մինչև հիմա՝ նույնպես), բայց կոլեկտիվի անդամներով չէինք կարող անմասն մնալ այդ ամենից, չէինք կարող թույլ տալ, որ ինչ-որ մարդիկ կանգնեցնեն մեր լրագրի ստեղծարար ընթացքը:

– Թեև բազմաթիվ առումներով համեմատելի են խորհրդային շրջանի և այսօրվա ժուռնալիստիկային ներկայացվող պահանջները, բայց և կան ընդ-

հանրություններ: Որո՞նք են, ըստ Ձեզ, լրագրողին ներկայացվող պահանջները բոլոր ժամանակներում:

– Հիմա նոր լրատվական դաշտ է ձևավորվել, սոցիալական կայքերը, էլեկտրոնային լրատվամիջոցներն ինչ-որ տեղ դուրս են մղել տպագիր մամուլը (խորապես համոզված եմ՝ ժամանակավոր): Ցավալի է տեսնել, թե ինչպես են արժեզրկվում բառը, խոսքը, միտքը: Լրագրողին ներկայացվող ամենաառաջին պահանջը բոլոր ժամանակներում հայոց լեզվին տիրապետելն է, քանզի այն իր աշխատանքի հիմնական գործիքն է: Լրագրողների առիթ է լինում գրել քաղաքական, սոցիալական, մշակութային, մարզական թեմաներով, և որպեսզի նրա գրածն արժանահավատություն ունենա, անընդհատ պիտի հարստացնի իր գիտելիքները: Մի խոսքով, լրագրողի գործունեության մի անբաժանելի մասը պիտի լինի ընթերցանությունը, առանց որի հնարավոր չէ նոր գիտելիքներ ձեռք բերել և զարգացնել հայեցի լեզվամտածողություն:

– Լրագրությունը մեր օրերում (և ոչ միայն) նաև նեղ մասնագիտական ուղղվածություն է ենթադրում՝ թեմատիկ և ժանրային առումով: Հատկապես ո՞ր ոլորտների լուսաբանումն է Ձեզ հաճելի և սրտամոտ:

– Գուցե մեր ժամանակների հասարակական-քաղաքական լարված իրավիճակն է թելադրում, որ ինձ վերջին ժամանակներս ավելի հոգեհարազատ են դարձել մարզամշակութային թեմաները: Այն էլ ասեմ, որ սպորտը և մշակույթը մեր ազգի այցեքարտերն են աշխարհում:

– Ի՞նչ խորհուրդ կտայիք բոլոր այն դպրոցականներին, ուսանողներին կամ բուհերի շրջանավարտներին, ովքեր որոշել են զբաղվել լրագրությամբ:

– Այս հարցին վերևում համարյա պատասխանել եմ տիրապետել հայոց լեզվին և որքան հնարավոր է՝ գիտելիքներ ձեռք բերել տարբեր ոլորտների մասին:

– Չե՞ք կարծում, որ օրերից մի օր Ձեր հեղինակած հոդվածները կամ դրանց ընտրանին պետք է ի մի բերեք և մեկ ժողովածուով հրատարակեք:

– Այդ մասին առանձնապես չեմ մտածել, բայց գիտության, մշակույթի վերը նշված գործիչների հետ հարցազրույցներս, դիմանկարները, հոդվածները, եթե հավաքեմ, մի հատորյակ, անշուշտ, կկազմի:

– Պարոն Օրբեյան, կրկին շնորհավորում ենք Ձեզ՝ լրագրողական գործունեության 40-ամյակի կապակցությամբ և ստեղծագործական նորանոր հաջողություններ ցանկանում: Հավատացե՛ք, ընթերցողն ամեն օր սպասում է Ձեր խոսքին:

– Անչափ շնորհակալ եմ:

ՀԱՐՑԱԶՈՐՈՒՅՑԸ՝
ԱՐՄԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ
01.08.2025

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՀԱՅԱՅՔ ԱՆՑՅԱԼԻՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԻՆ

Լև Օզերովի Նամակը Համո Սահյանին

Շեմ վախենալ նամակի ձևով գրված այս հոդվածը սկսել խոստովանությամբ, ավելի ճիշտ՝ հաղորդումով, մենք մինչև հիմա իրար չենք հանդիպել: Անձնապես ծանոթներ չենք: Թեև անծանոթներ, բայց մենք, այնուամենայնիվ, իրավունք ունենք համարելու մեզ հին և լավ ծանոթներ: Ի՞նչն է իրավունք տալիս ասելու այդ բանը:

Պոեզիան: Ձեր պոեզիան, Համո Սահյան, ինձ՝ ընթերցողիս հետ անձնական խոր կապի տպավորություն է թողնում: Չիմանալով թնարերգուի անկետային տվյալները, ես ամեն ինչ կամ էլ գրեթե ամեն ինչ գիտեմ նրա հոգեկան աշխարհի մասին: Տաղանդի ուժով և վարպետությամբ դուք ստիպում եք հետևել ձեր հոգեկան աշխարհին: Մենք նստած ենք դեմ-դիմաց և զրուցում ենք: Մեջտեղում, մեր միջև, ձեր գիրքն է:

Չնայած չի կարելի չհամաձայնել Մայակովսկու թեմավոր խոսքի հետ՝ «Պոեզիան ճանապարհորդություն է դեպի անիմանային», ես, այնուամենայնիվ, մտնելով բանաստեղծի աշխարհը, մուտք եմ գործում նաև իմանալի ոլորտները: Ես ճանաչում եմ բանաստեղծի այդ աշխարհը, ինչպես ճանաչում են ուրիշ մեկ այլ աշխարհ, բնագավառ, ոլորտ, ճյուղ: Ճիշտ է, այդ իմացությունը կատարվում է ոչ կանխամտածված ձևով, բանաստեղծը երգում է, բարբառում այն, ինչ աստված կհուշի, իսկ իմ մեջ նրա բոլոր երգերը զուգակցվում և ձուլվում են մի ընդհանուր երգի, նրա հոգու երգի մեջ: Թռչնի պացքը, արևածագը և մայրամուտը, սիրո երգը, Գյազբեյի ճառագայթումը, հայրենի գյուղը, մանկության աշխարհը, մոր հետ գրույցը, – այս բոլորը միանշանակ և հավասարաթեք չեն: Բայց բանաստեղծի աշխարհում, եթե նա իրոք բանաստեղծ է, այդ բոլորը ձեռք են բերում կենդանի զգացմունքային կապեր, փոխադարձ կախվածության մեջ են:

Ահա թե ինչու Ձեր պոեզիայում ես բաղաբացիական մոտիվները չեմ սահմանազատում անձնականից: Զաղաբացիականը հնչում է անձնականի մեջ, անձնականը՝ բաղաբացիականի: Ձեր այդ հատկությունը շատ հեռանկարային է և մեր ողջ պոեզիայի համար՝ հուսադրող:

Գիրքը ես երկար կարդացի: Չկարողացա կարդալ մի շնչով: Խիտ է գրված և, բացի այդ, ես այն ընթերցողներից եմ, որոնք այդպես էլ չկարողացան յուրացնել «ճեպընթերցման» նորագույն մեթոդը: Գուցե ես այդ հարցում հնարձ եմ: Ոչինչ չես կարող անել, այդպիսին եմ ու վերջ:

Այս նամակի առաջին տողերից ես պետք է խոսեմ անհարմարության այն զգացումի մասին, որ համակել է ինձ: Ես նամակ եմ գրում Ձեզ՝ Ձեր պոեզիայի մասին, որը կարդացել եմ թարգմանաբար և ոչ թե բնագրով: Այս կապակցությամբ բացառված չեն անճշտություններն ու վրիպումները: Ահա մազերս սպիտակել են, բայց այն լեզուն, որով ստեղծվել է մեծ գրականություն, ինձ համար մուռ է անծանոթ: Փորձեցի սովորել, այդ գործում ինձ ոգևորում էին ինստիտուտի իմ ընկերները՝ հայերը, մանկության ընկերս՝ Լորիս Յոզեֆյանը, իսկ հետո՝ Պավլո Տիչինան և Վերա Չվյագինսկան: Բայց գործը նախնական տեղեկություններից և այնպիսի համով բառերից, ինչպիսիք են, օրինակ, «Կռունկը» և «Ծիծեռնակը», այն կողմ չանցավ: Ինձ համար արդարացում չկա: Ինչպիսի բացթողում, ինչպիսի կորուստ:

Այսպիսով, ես կխոսեմ ոչ թե այն մասին, թե Դուք ստուգապես ինչ եք գրել, այլ այն մասին, թե Ձեր գրածների թարգմանություններից ինչ տպավորություն եմ ստացել ես՝ ռուս ընթերցողս: Դա նույնպես շատ կարևոր է: Թեկուզև այն պատճառով, որ տասնչորս հանրապետություն և տասնյակ ժողովուրդներ, ինչպես և ես, հայ պոեզիային ծանոթանում



են թարգմանություններով: Գրելով այս խոսքերը, ես գրեթե ֆիզիկապես զգացի այն պատասխանատվությունը, որ կրում եմ մեր եղբայր թարգմանիչները, դրանց թվում և ինքս: Պատասխանատվություն և երկյուղ, երկյուղ և ուրախություն...

«Տարիներս» գիրքը («Հայաստան» իրատարակչություն, 1971, ռուսերեն, կազմող՝ Լ.Մ. Մկրտչյան») աչքի է ընկնում բազմաթեմայնությամբ, կերպարների այլազան բնույթով և դրանց համապատասխան տարբեր ոճերով: Գուցե այդ բոլորի պատճառն այն է, որ գիրքն ընդգրկել է շատ տարիներ (այսինքն՝ ձեր տարիները, Համո Սահյան): Գուցե նշանակություն է ունեցել և այն, որ գիրքը տարբեր ժամանակներում թարգմանել են տարբեր թարգմանիչներ (Պաստեռնակից մինչև Սպենդիարովա, Չվյագինսկայից մինչև Տարկովսկի, Մարչենկոյից մինչև Գրեբև): Ես այստեղ չեմ թվարկի թարգմանական բոլոր հաղթանակներն ու պարտությունները, հաջողություններն ու ձախողումները: Այն աշխարհ գնացած բոլոր թարգմանիչները կլռեն, իսկ այս աշխարհում ողջ-առողջ ապրողները այդ բանը չեն ների, բանի որ ինքս նույնպես թարգմանում եմ և գրում թարգմանությունների մասին:

Գրքի բազմապլանայնությունը, այնուամենայնիվ, պետք է ամենից առաջ բացատրել բանաստեղծի հոգեկան հարստությամբ: Բազմապլան լինելու խնդիր դնելը դեռևս քիչ է: Դրա համար պետք է ունենալ հոգեկանի հիմք, պետք է կարողանալ մտածել ոչ թե «այստեղից» մինչև «այնտեղ», այլ այն ներքին ազատությամբ, որը միշտ էլ իսկական բանաստեղծին տարբերել է կեղծից:

Նախ մի առանձնահատկության մասին, որ գրավել է իմ ուշադրությունը ընթերցման ժամանակ, առանձնապես գիրքն առաջին անգամ ընթերցելիս:

Ես շատ անգամներ եմ մաշկիս վրա զգացել ինձ համար անծանոթ բառերի և անունների հիպոնոսային ազդեցությունը: Բառերը բեզ անծանոթ են, բայց հուզում են: Ի՞նչն է պատճառը: Իմ կարծիքով, պոեզիայի մեջ ի սկզբանե դրված է ինչ-որ խորհուրդ, ինչ-որ կախարդանք:

Պավլո Տիչինայի օրագրում այսպիսի գրառում կա. Սայաթ-Նովայից նա կարդացել է «Հուտով հիլ, միխակ, դարիչին, վարթ, մանիշակ, սուսամբար իս»... տողը: Նա, իհարկե, գիտեր, թե ինչ բան է մեխակը և մանուշակը: Բայց անծանոթ «սուսամբարը», այնուամենայնիվ, գերում է նրան: Բառը շատ գեղեցիկ է հնչում, և ոչ մի կասկած չի մնում, որ ինչ-որ բուրումնալետ բան պետք է նշանակի: Նույնիսկ առանց բառարան նայելու կարելի է այդ տողով գնալ սիրած կնոջ հետ ժամադրության:

Ժողովրդական հրաշք անվանում:

Պոեզիան սկիզբ առավ այն ժամանակ, երբ ամեն ինչին սկսեցին անուն տալ: Այդպես են հնչում ինձ համար «Գյազբեյը»,



«Լորագետը», «Որոտանը», «Սավարողը», «Արագը», «Հորովելը», և, իհարկե, «Նաիրին»... Տարբեր նշանակություն և արժեք ունեցող բառեր: Բայց ինձ համար, իմ այլ բառերի սովոր լսողության համար, դրանք կազմում են Ձեր բանաստեղծության հավելյալ երաժշտությունը, Համո Սահյան: Դուք դրանք չեք չարաշահում, ինչպես «կոլորիտի համար» չարաշահում են Ձեր գրչեղբայրներից ոմանք: Եվ, տեղին օգտագործելով, դրանք ինձ են վերադարձնում այն գերող խոսքի հնչյունները, որ մեզ է մնացել անհիշելի ժամանակներից:

*Քարավիների գլխին՝ Որոտանաբերդ,
Քարավիների ծնկան՝ Ծիծեռնավանք,
Քարավիների շուրթին՝ երկնքի շերտ,
Քարավիների շուրթին՝ ջրվեժի գանգ...*

Առանց այդ արթեցուցիչ, զնգուն անունների ի՞նչ կարող է նշանակել երկնքի ու ջրվեժի մասին ձեր հիշատակությունը...

Ձեր գործերում կա նաև թվերի պոեզիա, թվերի կախարդանք: Դա թվահմայություն, հեքիմություն չէ, այլ թվի ժողովրդական հավատք: «Բալլադ յոթ ձիավորի մասին»՝ այդ շարքի հիմնական ստեղծագործությունն է: «Յոթ անգամ կանչեց աբրող թառին, յոթ անգամ խփեց կայծակը սարին, յոթ անգամ ժամի գանգը ծլնագ, յոթ բանակ եկավ, բերող պաշարեց ու յոթ ձիավոր սկսեցավ գյուղից»։ «Յոթը» հնչում է որպես կախարդանք...

Ես գիտեմ, հայ ընթերցողի համար այդ թիվը սուրբ է (ի դեպ, հարկավոր է գրքում ծանոթություն գրել): Եվ այսպես՝ ամբողջ բալլադը: Դա ռուս ընթերցողին արհեստական և ձանձրալի կթվար, եթե չլիներ դրա իսկական ժողովրդական բալլադային հիմքը: Հիմնականում խոսվում է հայրենիքի համար զոհված յոթ ռազմիկների մասին: Տարեկան յոթ անգամ յոթ լույս է վառվում նրանց յոթ գերեզմաններին...

Յոթ նամակ է գալիս դարբնին ու դարբնի մեջքը յոթ անգամ ծռվում է... Յոթ անգամ նա մուրճը խփում է հին սալին: Յոթ անգամ: Հետո դարբինը յոթ թռռ է ունենում: Թիվը բանաստեղծության մեջ շարժվում է ոչ որպես մարզադաշտի «թվատախտակ», ոչ էլ որպես լուսային ռեկլամ տան վրա, այլ որպես պատմողի կենդանի ձայն: Նա չի կարող զրույցը վարել առանց մի ձեռքի հիկզ, ապա մյուս ձեռքի երկու մատները ծալելու: Նա հետևում է սովորությանը, և այդ սովորությունը մեզ համար նորություն է:

Ձեր ստեղծագործություններում կան ուրիշ թվեր ևս, բայց թողնեմ դրանք և զբաղվեմ Ձեր կերպարներով, թնարերգությամբ:

Համո Սահյան, հասկացե՛ք իմ ուրախությունը և սրտնեղությունը: Դուք գրել եք բանաստեղծություններ, որոնք պետք է ես գրեի: Դուք գրել եք դրանք իմ փոխարեն: «Չծանրանալ»... Չծանրանալ թռչիքի ժամանակ: Ուժեղ է ասված: Կյանքի

թռչիքը դժվարին է: Տարիների ընթացքում մարդը բեռնավորվում է գործերով, պարտականություններով, կշռումներով, հիշողություններով, հիվանդություններով, վշտերով: Կարևորն այն է, որ չճանրանաս թռչիքի ժամանակ: Ինչպե՞ս է դա ձեռք բերվում: Ձեր պատասխանը միանշանակ չէ: Այդ մասին է Ձեր թնարերգությունը: Իրավացի է Ալլա Մարչենկոն՝ գրքի նախաբանի հեղինակը, երբ գրում է, որ Ձեր պոեզիան, «իր ողջ պարզությամբ հանդերձ, բարդ է»։ Այդպիսին է նաև կյանքը՝ իր ողջ պարզությամբ հանդերձ բարդ է, իր ողջ բարդությամբ հանդերձ՝ պարզ...

Ինչպիսի գծեր են երևում Ձեր պարզ-բարդության մեջ:

Դուք վերցնում եք առօրեական փաստը, արտաքինից ոչնչով աչքի չնկնող փաստ, որի կողքով անտարբեր կանցնեն շատերը: Դրա հետ «ինչ-որ» բան եք անում, որից հետո փաստը ներկայանում է կերպարանափոխված: Ոչ զգեստավորված, ոչ էլ փոքր իսկ գունազարդված, այլ՝ հենց կերպարանափոխված: Ես կավելացնեմ նաև՝ ոգեշնչված: Դուք այն գուրգուրանքով պահել եք Ձեր սրտի մեջ, չլիել եք ձեռքերով, տաքացրել: Դուք հենց ինքներդ էլ հուշում եք, թե իրականում ինչ է կատարվում:

Ծածանկում է ծառն ի վար

Ծիածանի մի ծվեն...

Իմ երագից է պոկվել,

Կանաչ-կարմիր երագից:

Քար: Եզ: Գետ: Քարափ: Մասրենի:

Թռչուն: Ամպ: Արևմուտ: Ճանապարհ: Երգ: Այգաբաց: Ես դիտմամբ եմ առանձնացնում այս գոյականները: Դուք վերցնում եք դրանք իբրև բնության պարզև: Եվ սովորական առարկայի մեջ բացում եք նրա աշխարհը: Բայց առարկայի աշխարհը չէր բացվի, եթե դրա հետ միաժամանակ չբացվեր Ձեր աշխարհը, պոեզիայի աշխարհը:

Քարափ կիրճում: Տրվում են նրա նկարագիրը, նրա բնավորությունն ու սովորությունները: Նկարչի համար այսբանը բավական կլիներ, բանաստեղծի համար՝ ոչ: Եվ թնարերգուն նկարն ավարտում է խոստովանություն-համեմատությամբ, նրա աչքը քարափի և ինչ-որ հարազատ մարդու միջև նմանություն է տեսնում:

Սատանան տանի,

Ինչ-որ հեռավոր նմանություն կա

Խաչիպապ պապիս

Եվ այդ հյուղընկալ քարափի միջև:

Գուցե հանուն այս մեկի չարժեք բանաստեղծություն գրել: Բայց այստեղ ավելի մեծ բան կա, բան համեմատությունն է: Քարափը շնչավորված է, իսկ մարդը հավերժացվել, դարձել է նույն ինքը բնությունը, ծուլվել նրա հետ:

Վերցված է պարզ երևույթ, բայց թնարական կերպարի խորանալու, աճելու հետ բարդանում է այդ երևույթը և դուրս է գալիս առաջադրված թեմայի սահմաններից:

Ձեր բանաստեղծություններում պարզը դառնալով բարդ և բարդը դառնալով պարզ, հոգի չեն հանում, հանելուկներ չեն առաջադրում: Ընդհակառակը, գնալով ավելի ու ավելի եմ աշխարհին ու ինձ նայում այն չափով, որ չափով Դուք հնարավորություն եք տալիս ինձ հետևելու Ձեր ապրումների և տրամաբանության ընթացքին: Ինձ համար կարևոր չէ Ձեր խորհրդածությունների հաջորդականությունը. շատ ավելի կարևոր է լարվածությունը, Ձեր ինքնատիրապետումը: Թնարերգուն չպետք է վախենա ինքնառնչացումից: Շատ ավելի վտանգավոր է նրա համար անհոգությունը, առավել ևս՝ սևապարծությունը (մեր պոեզիայում դրա օրինակները որքան ուզե՛ք կան):

Դուք պնդում եք, թե շատ թերություններ ու պակասություններ ունեք: Եվ դրա հետ մեկտեղ ավելացնում եք. «... Որոնք թաքցնել չկարողացա, այդ էլ իմ վերջին պակասությունը»...

Այստեղ ես Ձեզ հետ համաձայն չեմ, Համո Ասիյան: Դա Ձեր առավելությունն է: Եթե ես ծանոթ չլինեի Ձեր մյուս բանաստեղծություններին, ապա այդ պնդումը կընդունեի որպես բառախաղ:

Թնարերգուն կարող է և չլինել կատարելության մարմնացում, բայց նրան բնորոշ է կատարելության ձգտումը: Ես պատրաստ եմ Ձեզ հետ վիճելու, Համո Սահյան, ապացուցելու, որ Ձեր ստեղծած կերպարների մեջ կան նաև քիչ հաջողվածներ, անցողիկներ, անկարևորներ: Դա պատահում է յուրաքանչյուր





Տոնակատարություն Տեղ համայնքում

Գորիսի տարածաշրջանի այդ գյուղում՝ առաջին անգամ, նշվեց համայնքի օրը:

Գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցում մեկ-նարկած տոնակատարությունը ներառում էր հանդիսավոր ցերեկույթ, համերգ, պարզևատրումներ, մարզական միջոցառումներ: Նաև հյուրասիրություն էր՝ մշակույթի կենտրոնի մերձակայքում տեղակայված տաղավարներում:

Մշակույթի կենտրոնի բակում բացվեց նաև գորավար Անդրանիկի կիսանդին, ով 1918 թ. օգոստոսից մինչև 1919 թ.

մարտ Սյունիքում էր, նստավայրն էր Գորիս քաղաքը և Անգեղակոթ գյուղը:

Գյուղը գրավոր աղբյուրներում

հիշատակվում է 998 թվականին, երբ այն՝ Սյունիքի առաջին թագավոր Սմբատ Ա-ի կողակից Շահանդուխտը նվիրեց Տաթևի վանքին:

Գյուղի բազմաթիվ սրբավայրերից ամենահիշարժանը, անշուշտ Սուրբ եղիս է, որը, ըստ ավանդույթի, կառուցել է Պատմահայր Մովսես Խորենացին՝ իբրև ճգնարան:

11.08.2025

վարպետի հետ: Բայց այն, ինչ գերում է ինձ Ձեր գրքում, սեփական անձի անկատարելության գիտակցումն է: Դա արտացոլված է ոչ թե ուղղակի, ճակատային ձևով, այլ թափանցում է տողերի արանքից, ինչպես սարերի օդը և հով է սփռում նրանց վրա, ինչպես սարի քամին:

Ընդհանուր առմամբ գրքի, ավելի ճիշտ, նրա հեղինակի՝ Ձեր մասին ասված այս խոսքերից հետո ես ինձ թույլ եմ տալիս հայտնել առանձին տողերից, էջերից, կերպարներից ստացած իմ տպավորությունները... Այդ տպավորությունները շատ են: Եթե սկսեմ այսօր առավոտյան, վաղը երեկոյան չեն վերջանա: Այս ուղղությամբ Դուք շատ աշխատաւք եք կատարել: Ես տեսնում եմ աշխատանքը և նրա արդյունքները: Դրանք ակնհայտ են և խոսելու շատ բան կա: Այդ պատճառով էլ ես իմ տպավորություններն առանձնացնում և խմբավորում եմ:

Ուզո՞ւմ եք, Յամո Սահյան, անմիջապես հերքել այն տեսակետը, ըստ որի Դուք բնարեղբու մանրանկարիչ եք և ապացուցեմ, որ Դուք էպիկ-մոնումենտալիստ եք: Առերևույթ Ձեր «Մասրենին» բնակարային փիլիսոփայական բնույթի բնարական բանաստեղծությունն է:

- Ինչպիսի՞ պատկեր, - ասացի ես առաջին ընթերցումից հետո:
- Ինչպիսի՞ խոր միտք է դրված այստեղ, - ասացի ես, վերընթերցելով Ձեր տողերը:

Քարափը ծածկել է երկինքը և ինքը դարձել երկինք: Նրա վրա տարածվել են մասրենու արմատները: Մասրենու համար այդ քարափը միաժամանակ էլ հող է, է՛լ երկինք: Հողմերը ի վիճակի չեն նրան պոկելու այդ քարափից: Մասրենու տեսքը մտածել է տալիս քարափների, բույսերի, մարդկանց, ժողովրդի ճակատագրի մասին:

Քանի քարեղեն զանգվածը նրա՝ Մասրենու համար երկինք է ու հող: Օ՛ր, սա Հայաստանի ճակատագիրն է, նրա բնակարգը: Սա պատմության թանձրույթն է և ոչ թե նկար: Իհարկե, սա էպիկականորեն մոնումենտալ է, չնայած կառուցված է բնարական միջոցներով:

Ինձ հմայեց Ձեր խաչկապ պապը: Ինչպիսի՞ ծերունի: Ինչպիսի՞ հարազատության մեջ է մարմնավորել ժողովրդի գծերը: Ամեն ինչի վարպետ, նա ստեղծվել է բնության կողմից, որպեսզի կատարելով իր բոլոր բարի գործերը, Նորից ծովի բնությանը: Այդ մեծ շրջադարձը Դուք ցուցադրում եք համոզիչ կերպով. «Խառնվել այն հողին, որ իրեն սնել է»: Խաչկապի ժպիտն ու իմաստությունը հայ պատմական կյանքի ժպիտն ու իմաստությունն են: Կարելի էր այլասացությունների մի շարք պատմել խաչկապի մասին: Բայց Դուք այդ ճանապարհով չեք գնացել: Դուք բնարեղբույան մեջ որմանակար եք արել: Այժմ ես այսպես եմ ծանոթ խաչկապին, որ թե՛ հանդիպելի նրան փողոցում (իսկ նա ժողովրդի մեջ միշտ էլ կենդանի է, քանի որ ինքը հենց ժողովուրդն է), կբարևեի և կխոնարհվեի նրա առաջ: Մինչև գետին կխոնարհվեի, որովհետև նա ինքը Հայաստանն է:

Դուք խոսքի նկարիչ եք: Բնակարի մեջ Դուք կարողանում եք տալ դիմանկար, դիմանկարի մեջ՝ բնանկար: «Օրոր էր ասում աշունն անտառին, բայց դեռ անտառի քունը չէր տանում»: Այստեղ բնակարը և խմբակային նկարը (մայրը և երեխաները օրորոցում) ձուլվում են իրար: Քարափներն իրար են նայում, ինչպես արծիվները թռիչքից առաջ: Հետո՝ «Երազների ծվենները» և «Խուշերի անդունդները» ստվերագծվում են բնության ֆոնի վրա: Իսկ լորը Ձեր բանաստեղծության մեջ կտուցին ծիածան է տանում:

Սարի ստվերը փարվում է ժայռին, ժայռի ստվերը ծառին է փարվում:

Դա ես տեսնում եմ: Դրանք բառեր են, որ թողթից պետք է փոխադրվեն կտավի վրա: Այնպես, ինչպես Ձեր մյուս տողերը:

Խոսելով կտավի մասին, ես պետք է խոսեմ նաև գույների մասին: Դուք կոլորիստի վարպետ եք: Ձեր ներկապակի շրայությունը պետք է զգա յուրաքանչյուր անկանխալկալ մարդ: Քամին Ձեր մի բանաստեղծության մեջ նախ կանաչ է. ինչպես Լորկայի մոտ, հետո՝ կարմիր, հետո դեղին, հետո՝ սպիտակ: Քամիների մի ամբողջ գամմա: Եվ

դա խաղ չէ: Ձեր քամին կապույտ է (այնուամենայնիվ, կապույտը Ձեր սիրած գույնն է): Ամպրոպից հետո երկնքի կապույտը Ձեր բանաստեղծության մեջ ավելի կապույտ է, սպիտակ շուշանը ավելի սպիտակ, արևը՝ ավելի բարի: Գույնի, ապրումի, մտքի ինտենսիվությունը մանկության կապույտ աշխարհն է: Ամպի փաթիլը ոգու լուսարծակում է: Գույնն արտահայտում է մարդու հոգեկանը, նրա զգացումներն ու մտքերը: Մայրամուտը կարմիր է ներկում լեռները, իսկ հետո, մահվանից առաջ, ուղղում է, դարձնում կապույտ: Գիծը և գույնը կրկնում են հեղինակի ներքին ժեստը:

Հատուկ արված համեմատությունն ինձ հարկավոր չէ: Դրանք գալիս են ոչ թե սրտից, այլ չնայած մեծ, բայց խորամանկ վարպետությունից: Հավատացե՛ք ընթերցողիս ընկալմանը, Յամո Սահյան: «Կայծակ էր, խփեց, բեկվեց, թափառաց»: Առաջին տունը շատ լավ է, պատկերը կապում է մտքին: Երկրորդ տունը բացատրում է առաջինը: Ինչ-որ արհեստական բան կա Ձեր այդ համեմատության մեջ: Մի՞թե դա պետք է: Ես չեմ պնդում, հարցնում եմ: Եկե՛ք մտածեք:

«Վերադարձի» մեջ ինձ գրավեց մասրենու ստվերը. «Կարկատանաձև ստվերն է կախել կոճի չեչոտ այտերի վրա»: Սա հայուցիական չափ տեսանելի է:

Կարելի է հաղորդել պատկերը և չկարողանալ հաղորդել վիճակը: Ուրախալի է, որ Դուք դրանում ևս չեք հիասթափեցնում: Ընդհակառակը, շատ ճիշտ ու նուրբ եք տալիս հոգեվիճակները: Ահա Դուք սարսափում եք օտարության մեջ ապրելու և մեռնելու մտքից: Ինչպե՞ս կարելի է ապրել այն հողում, ուր ամեն մի քարից, աղբյուրից «իմ աչքերով իմ աչքերին նայող մանկություն չկա»: Այս երկու հիանալի հայացքները տեսնում և զգում ես: Տրված է վիճակը:

Բացի այդ, վիճակը տրված է ոչ թե հեռավոր ակնարկներով, այլ՝ բանաստեղծական ճշգրիտ բանաձևերով: Ահա թե ինչպիսի տեսք է ստացել դա Ձեզ մոտ: Մարդը տիրապետում է այն ամենին, ինչ որ պետք է, և չի մտածում այն մասին, ինչ որ պետք չէ: Նա կարծես թե ամեն ինչ ունի,

բայց, այնուամենայնիվ, երջանիկ չէ... Թվում է, սա օրագրային գրառում է, թվարկում, անձնական բնույթի նշումներ: Բայց բանաստեղծի գրչի տակ այն ձեռք է բերում ընդհանրացման ուժ:

Ես մեկը մյուսի հետևից կարդում եմ Ձեր բանաստեղծությունները Ձեր մասին, բնության մասին, մարդկանց մասին, իսկ իմ առջև հանում է լարված և հետաքրքիր կյանքով ապրող ժամանակակցի կերպարը: Ինձ թվում է, թե ես ոչ միայն բանաստեղծություն եմ կարդում, այլ նաև գրուցում եմ իր սիրտն ինձ վստահած մարդու հետ:

Կարդալով Ձեզ, ես ուրախացա, որ Հայաստանում, տաղանդներով աներևակայելիորեն հարուստ Հայաստանում, կա այնպիսի բանաստեղծ, ինչպիսին Դուք եք:

Կարդալով Ձեր գիրքը, ես շատ անգամներ թաթախվում եմ. Ձեզ հաջողվել է գրել այն, ինչ ես կուզեի գրել: Իմ մտադրությունն իրագործել եք Դուք: Դա ծնում է ուրախության և, իհարկե, շնորհակալության զգացում:

«Այստեղ մարդ է այրվել»... Ֆետի այս տողը, որ Բյուրի օգտագործել է որպես բնաբան, Նորից ու Նորից վերհիշեցի, երբ փակեցի Ձեր գիրքը և Մոսկվայի իմ բնակարանից իջա փողոց՝ Որոտանի վրայի ամպի և հեռու, հեռու, հեռու նախրյան դալար բարդու զգացողությամբ: Սրանք իմ խոսքերը չեն, սրանք կարդացել եմ Ձեր գրքում, Յամո Սահյան:

Այստեղ չեն լինի եզրակացություններ, շնորհավորանքներ, մաղանքներ, գովասանքներ, պարսավանքներ և այլն:

Ես լսեցի Ձեզ, Յամո Սահյան: Ես Ձեզ լսեցի...

Ձեզ համար բարի մարդիկ,
Մատաղի գառ եմ դառնալու,
Ձեր ճամփին չվաք արած
Սուսի սուրբ ծառ եմ դառնալու,
- Քարի պես ընկե՛ք ճամփիս.
Թե մի օր չար եմ դառնալու,
Թող չարի ճամփին ընկնեմ,
Թե մի օր քար եմ դառնալու:

ԼԵՎ ՕԶԵՐՈՎ

Տաշտուն բնակավայրի օր

Օգոստոսի 9-ին Մեղրի համայնքի Տաշտուն բնակավայրը համախմբել էր մեծ թվով մարդկանց՝ նշելու իր տոնը:

Օրը մեկնարկեց հարգանքի տուրքով՝ համայնքի ղեկավարի, ավագանու, համայնքապետարանի աշխատակազմի, տարբեր կառույցների ներկայացուցիչների և բնակիչների մասնակցությամբ: Ծաղիկներ խոնարհվեցին 44-օրյա պատերազմում զոհված հերոսների հուշադրյունին, արմատներով տաշտունեցի քաջորդի Անդրանիկ Հարությունյանի շիրմին:

Տոնական տրամադրությունը շարունակվեց ավանդական ջերմ ընդունելությամբ:

Հնորհավորական խոսքով հանդես եկան համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը, տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանը, վարչական ղեկավար Անդրանիկ Կարապետյանը և բնակիչներ:

Համայնքի ղեկավարը շնորհակալագրերով պարգևատրեց վարչական ղեկավարին և գյուղի զարգացման գործում ավանդ ունեցող հարգարժան տաշտունեցիներին:

Հանդիսավոր միջոցառումը զարդարեցին Հ. Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի պարի, «Մեղրիի մարգամշակության կենտրոն» ՀՈԱԿ-ի «Արփի» պարային համույթի և երգի խմբակի սաների գեղեցիկ ելույթները: Տոնական օրն ավարտվեց հյուրասիրությամբ: //



Վահրավար գյուղի օրը

Օգոստոսի 17-ին Մեղրի համայնքի Վահրավար բնակավայրը ջերմ մթնոլորտում նշեց իր օրը:

Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը, Վահրավարի վարչական ղեկավար Ռոմիկ Պողոսյանը, հյուրերը և համագյուղացիները կատարեցին ծաղկեղույն Արցախյան առաջին պատերազմում նահատակված Սուրիկ Հովհաննիսյանի շիրմին, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի հերոսների հուշարձանին:

Խաչատուր Անդրեասյանը հանդես եկավ շնորհավորական խոսքով՝ կարևորելով համայնքային համախմբվածությունը, ավանդույթների պահպանումն ու գյուղի զարգացումը:

Նա շնորհակալագրեր հանձնեց Նախկին գյուղապետ Սարգիս Առաքելյանին և վահրավարցիներին՝ արժանապատիվ գործունեության ու գյուղի բարօրությանը նպաստելու համար:

Հնորհավորական խոսքով և աղոթքով հանդես եկավ տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանը: Տոնը շարունակվեց համերգային ծրագրով. ելույթ ունեցան



«Արփի» և «Xachman» համույթների չքնաղ պարուհիները, «Մեղրիի մարգամշակության կենտրոն»-ի երգի խմբակի սաները:

Օրը եզրափակվեց հյուրասիրությամբ՝ միավորելով բոլորին մեկ սեղանի շուրջ: //



Լիճք բնակավայրի օրը

Օգոստոսի 15-ին Լիճք բնակավայրում տոնական տրամադրություն էր:

Բնակավայրի օրը նշվեց մեծ շուքով՝ համախմբելով տեղացիներին ու տարբեր վայրերից ժամանած հյուրերին:

Օրվա մեկնարկը տրվեց Արցախյան առաջին պատերազմում զոհված լիճքցի Սուրեն Սկրտչյանի գերեզման այցելությամբ: Համայնքի ղեկավարը և ներկաները ծաղիկներ խոնարհեցին Նրա շիրմին՝ հարգանքի տուրք մատուցելով հերոսին:

Ծաղկեղյուն արարողություն տեղի ունեցավ նաև 1941-45 թթ. Հայրենական մեծ պատերազմում անսահացած լիճքցիների հուշարձանին:

Համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը շնորհավորեց

ներկաներին, ընդգծեց համախմբվածության և ավանդույթների պահպանման կարևորությունը, ապա շնորհակալագրեր հանձնեց վարչական ղեկավար Հայկ Հովհաննիսյանին և մի շարք երախտավոր լիճքցիների:

Համերգային ծրագրով հանդես եկան և հանդիսատեսին իրենց կատարումներով ուրախացրին «Մեղրիի մարգամշակության կենտրոն»-ի «Արփի» պարային համույթի և երգի խմբակի սաները, ինչպես նաև ««Արևիք» արվեստի դպրոց»-ի «Xachman» համույթի պարուհիները:

Տոնական օրը եզրափակվեց հյուրասիրությամբ, երգով ու պարով՝ թողնելով ջերմ ու հիշարժան տպավորություններ: //

ԿՈՐԵԼԷ

Կապանի բժշկական ուսումնարանի 1996 թ. շրջանավարտ Թեմիլեն Արտուշի Մուսախանյանի դիմումը: Դիմումի համարը՝ Կ-01 5914: Համարել անվավեր:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՐՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Հաճույան 20/32:

(+374 91) 45 90 47

(+374 77) 45 90 47

syuniacyerki@mail.ru

www.syuniacyerki.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Լույսը տպագրվել է մեքենագիր վիճակում:

«ԳՐՎԱԶԴ» – ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆՆ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բազրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 03.09.2025թ.: